

«Ներկայիս Հալեպի Հայութեան Տարհանումի Ծրագիր Գոյութիւն Զուճի» Ըսած է Վերապատուելի Յարութիւն Սէլիմեան

«Արեւելք» կայքէջին տրուած հարցազրոյցին մէջ Հալեպի Հայ Աւետարանական համայնքի համայնքապետ, վերապատուելի Յարութիւն Սէլիմեան յայտնած է, որ «հազարաւոր վիճակներու մատնուելու պահուն, եթէ ստիպողաբար ժողովուրդը Հալեպէն հեռացնելու պարտադրանքին տակ ըլլանք, Հայաստանի իշխանութիւնները պատրաստ են հայութեան տարհանումը ապահովել»:

Վերապատուելին նաեւ ըսած է, որ այդ օրակարգը ինք անձնապէս քննարկած է Հայաստանի բարձրագոյն մարմիններուն հետ: Վերապատուելի Սէլիմեան թելադրեց, որ «որոշ մարդիկ, խաղաղ եւ կանաչ տեղերու մէջ նստելով երբեմն-երբեմն աժան խորհրդատուութիւններ չկատարեն, որպէսզի Հալեպի մէջ մեր ժողովուրդը կարենայ կեդրոնացած եւ ամրագրուած վերլուծումներ կատարել»:

Անդրադառնալով հալեպահայութիւնը զանգուածային ձեւով Հայաստան փոխադրելու շուրջ

եղած խօսակցութիւններուն՝ վերապատուելին նշած է, որ ինք անձնապէս բազմիցս ջանացած է հայաստանեան կողմին բացատրել, որ պատերազմ ապրող ժողովուրդին հայրենադարձութեան ծրագիրները ներկայացնելը շատ սխալ պիտի ըլլայ, որովհետեւ փորձը ցոյց կու տայ, որ այդ մարդոցմով Հայաստանը պիտի չշահի: Երկրորդ կարեւոր հանգամանքը, որ ան նշեց, Հայաստանի ունեցած կարելիութիւններու սահմանափակութիւնն է: Խօսելով Դամասկոսի մէջ ամիսներ առաջ ՀՀ ԱԳ նախարար էտուարտ Նալպանտեանի հետ կայացած հանդիպման մասին, ան նշեց, որ պրն. Նալպանտեան անձամբ ըսած է, որ Հայաստանի իշխանութիւնները մինչեւ այս պահը իրենց հնարաւոր բոլոր միջոցները ծառայեցուցած են յօգուտ Հայաստան հասած սուրիահայերուն: Այս ուղղութեամբ, վերապատուելի Սէլիմեան

Շաբ.ը էջ 4

Հայաստանի Կառավարութեան Հերթական Կասկածելի Գործարքը Յեղասպանութեան Թանգարանի Կողքին Կրնայ Բացուիլ Քազինօ

Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրը կէս գինով եւ առանց մրցուցիչի պիտի վաճառուի ընդամէնը մէկ ամիս առաջ հիմնադրուած «ՆՏԱԱ Ինվեստմենտ Կրուփ» ընկերութեան: 60.7 միլիոն տոլար գնահատուած համալիրը եւ անոր յարակից 9.5 հեկտար հողամասը 30 միլիոն տոլարով վաճառելու պայմանագիրը նախատեսուած է ստորագրել մէկ ամսուայ ընթացքին:

Հայաստանի Կառավարութեան նիստի ընթացքին նախագիծը ներկայացնող պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան տեղեկացած է, որ չորս տարուայ ընթացքին աւելի քան հարիւր միլիոն տոլար ներդրում կատարելով՝ գնորդը համալիրի շուրջ պիտի կառուցէ հիւրանոցներ, փակ ջրաշխարհ, համերգային դահլիճներ, հանդիպումներու սրահներ, ճաշարաններ, խանութներ, ինչպէս նաեւ պիտի ապահովէ 250 նոր աշխատատեղեր:

ստեղծում: Կառավարութեան որոշման նախագիծը կը տեղեկացնէ, որ գնորդը Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի անմիջական հարեւանութեամբ գտնուող համալիրէն ներս նաեւ խաղատուն պիտի կառուցէ:

Արդարադատութեան նախարարութեան մօտ 2015-ի Յուլիս 20-ին գրանցուած «ՆՏԱԱ Ինվեստմենտ Կրուփ»-ի միակ հիմնադիրը նշուած Արմէն Զաւէնի Գէորգեանը:

«Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցը այցելելով այդ հասցէին, պարզած է, որ, ընկերութիւնը եւ Գէորգեանի բնակարանը նոյն հասցէին են՝ Հրաչեայ Քոչար 22 շէնք: «Այցելեցինք» պարզելու, թէ ո՞վ է հանրութեանը անյայտ գործարարը, ով պատրաստ է վերջին տարիների խոշորագոյն ներդրումներից մէկը կատարել Հայաստանը:

Շաբ.ը էջ 4

ՍԴՀԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱԻԱՔԸ ՍԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ



Բանակումի մասնակիցները Գառնի տաճարի մուտքին

Օգոստոս 9-ի առաւօտեան կանուխ ժամերէն իսկ, Մաղկաձորի լեռներուն վրայ թառած «Արի Տուն» ծրագրի յատուկ ճամբարային շէնքը կը վիտար իւրաքանչեւ աշխուժութեամբ:

Բոլորը կը նախապատրաստուէին հաւաքի եզրափակիչ խտացեալ ծրագրի իրականացման, որ կ'ընդգրկէր շրջապայտութիւնումի տաճարային շէնքի վերակառուութիւնը, Սարգսյան պատ եւ Միծեռնակաբերդի յուշահամալիր:

Առաջին հանգրուանը՝ Հայ ժողովուրդի քրիստոնէական հաւատքի հիմնաքարը եւ ծննդավայրը հանդիսացող Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարն էր, ուր հաւաքի մասնակիցները հիացմունքով դիտեցին Հայ Եկեղեցւոյ խորհրդանշանային այս սրբավայրը, իր հին, վերանորոգ եւ նորակառուց համա-

լիրներով, շրջապայտեան եկեղեցական այս կալուածի տարբեր բաժիններ, աղօթեցին Մայր Տաճարին մէջ՝ մոմ վառեցին նահատակ Քասններու հոգուոյն հանգստութեան համար եւ աղօթք մըն ալ մըմնջեցին իրենց սիրելիներու բարօրութեան ի խնդիր:

Քրիստոնէական հաւատքի այս ամրակու սրբավայրէն հաւաքի մասնակից շուրջ 250 երիտասարդներ, եւ ղեկավար Հնչակեաններ – կուսակցական թէ միութենական ուղղուեցան ղէպի հայու պաշարի ոգիի խորհրդանիշ եւ ազատութեան տենչի մարմնաւորում հանդիսացող Սարգսյան պատի համալիր:

Այստեղ՝ յատուկ ուղեցոյցներու ընկերակցութեամբ, մասնակիցները նախ շրջապայտութիւն կա-

Շաբ.ը էջ 5

ՍԱՅ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՎԵԹԵՐԱՆ ԸՆԿԵՐ ՊԵՏՐՈՍ ՍՈՒՇԵԱՆԻ

Երեքշաբթի, 4 Օգոստոս 2015-ին, Թորոնթոյի մէջ իր մահկանացուն կնքեց, ազգային եւ կուսակցական գործիչ, Ընկ. Պետրոս Սուշեանը:

Ան հիմնադիրն է Ս.Դ.Հ.Կ. Գանատայի շրջանին, ինչպէս նաեւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ երկարամեայ խմբագիրը «Լուսաբաց» շաբաթաթերթին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 8 Օգոստոս Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, Թորոնթօ:

Ընկ. Պետրոս Սուշեանի ծառայութիւնները նշանակալից էին որպէս անդամ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան, եւ այս տիտղոս առիթով Կեդրոնական Վարչութիւնը իր յղած ցաւակցագրին մէջ կ'ըսէր Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ հաւատաւոր կուսակցական եւ հասարակական գործիչ, Ս.Դ.Հ.Կ. կեդրոնական վարչութեան նախկին անդամ, Գանատայի շրջանի կուսակցական եւ միութենական միաւորներու հիմնադիր՝ Ընկ. Պետրոս Սուշեանի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, Օգոստոս 4, 2015 թուականին, Թորոնթոյի մէջ, յետ



Կարճատեւ հիւանդութեան:

Այստեղ պէտք է յիշել նաեւ որ վերջերս Քասն Կախաղաններու 100 ամեակին առիթով, Կեդրոնական Վարչութեան ընկերներու շրջապայտութեան ընթացքին, Ընկ. Սուշեան ունեցած երկարամեայ կուսակցական վաստակին համար, պարգեւատրուեցաւ «Փարամազ»-ի անուան շքանշանով, ձեռամբ Կեդր. Վարչ. Ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանի:

Ընկ. Սուշեանի յիշատակը անթափանչ պիտի մնայ գինք ճանչցողներու սրտին եւ մտքին մէջ:

ԳՈՅԺ

ՍԴՀԿ Կեդրոնական վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ հաւատաւոր կուսակցական եւ հասարակական գործիչ, ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան նախկին անդամ, Գանատայի շրջանի կուսակցական-միութենական միաւորներու հիմնադիր՝ Ընկ. Պետրոս Սուշեանի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, Օգոստոս 4, 2015 թուականին, Թորոնթոյի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԱՄՆ-Ը Հայաստանում անցնում է վճռական քայլերի

ՆԱԾԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Օրերս ԱՄՆ ՄԶԳ (Միջազգային Զարգացման Գործակալություն Մ.) Հայաստանի գրասենյակի ղեկավար Քարեն Հիլարդը սենսացիոն յայտարարություն է արել: «Ազատություն» ռատիոկայանին տուած հարցազրույցում նա ասել է, որ Հայաստանում քաղաքականությունը ու բիզնես-շահերը բաւարար չափով տարանջատուած չեն, եւ երկրում «վարչական կոռուպցիա» կայ:

Ընդ որում, Քարեն Հիլարդն ասել է, որ Հայաստանին անհրաժեշտ է օրէնսդրական կարգաւորում, որը քաղաքականությունը կը տարանջատի բիզնեսից, եւ առաջին քայլը կարող է լինել պաշտօնեաների ունեցուածքի յայտարարագրման գործընթացի յստակեցումը՝ պատիժների սահմանումը նրանց հանդէպ, ովքեր չեն բացայայտի իրենց ունեցուածքը:

Նա աւելացրել է, որ որոշել է ռիսկի գնալ եւ իր ներդրումն ունենալ հակակոռուպցիոն յանձնաժողովում: «Եթէ կառավարությունը չստեղծի հակակոռուպցիոն յանձնաժողով, այդ դէպքում ո՞րն է այլընտրանքը: Եթէ այլընտրանքը ոչինչ չանելն է, դա ոչ մի տեղ չի տանի Հայաստանին: Ուստի այն, ինչ ես պատրաստուած եմ անել, հետեւեալն է ռիսկի դիմել՝ ներդրում անելով հակակոռուպցիոն այս յանձնաժողովում եւ պատասխանատու թիւն ստանձնելով, որ արդիւնք կը լինի ԱՄՆ հարկատուների միջոցների դիմաց: Եթէ արդիւնքներ չլինեն, կը շարունակեմ ներդրում անել, - ասել է նա:

Սա անախագէտ յայտարարութիւն է, որը ցոյց է տալիս ԱՄՆ կառավարութեան ուղղակի շահագրգռուածութիւնը Հայաստանում վարչական կոռուպցիայի դէմ պայքարելու գործում: Կոռուպցիա կայ բոլոր երկրներում, սակայն յետխորհրդային տարածքում այն գրեթէ լեգիտիմ կարգավիճակ է ստացել: Ատկատները, պետպատուէրների կեղծ տեղերները, պետական գնումների բարձր գները իշխանութեանը մօտ կանգնած մարդկանց գոյութեան միջոցներն են:

Յատկանշական է, որ ԱՄՆ-ը

Հայաստանի պատմութեան մէջ խոշորագոյն ներդրումային գործարքին գուզահեռ ակտիւացրել է կոռուպցիայի դէմ պայքարը Հայաստանում: Աւարտուել է Որոտանի հիդրոէլեկտրակայանի վաճառքն ամերիկեան «Կոնտուր Գլոբալ» ընկերութեանը: Գնման գինը չի նշուում՝ չնայած խօսուած էին 180 միլիոն տոլարի մասին: Յայտարարուել է, որ ընկերութիւնը մտադիր է մինչեւ 50 միլիոն տոլար ներդնել հներգետիկ համակարգի արդիականացման մէջ:

Մայիսին Սերժ Սարգսեանի ԱՄՆ կատարած այցի ժամանակ հայ-ամերիկեան առեւտրա-ներդրումային համագործակցութեան համաձայնագիր է ստորագրուել: Կարելի է նկատել Հայաստանի նկատմամբ ամերիկեան մի շարք ընկերութիւնները հետաքրքրութիւնը: Օրինակ, վերջերս Երեւանում էին «Բոնիգ» աւիահակայի ներկայացուցիչները:

Ամերիկեան ընկերութիւնները չեն կարող աշխատել վարչական, այսինքն, համակարգային կոռուպցիայի առկայութեան պայմաններում: Ուաշինգթոնը Հայաստանի իշխանութիւններին առաջարկել է «ինքնամաքրուել»:

Վարչապետ Յովիկ Աբրահամեան անձամբ է գլխավորել Հակակոռուպցիոն յանձնաժողովը, որը ստեղծուել է ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Վիկտորիա Նուլանդի Հայաստան կատարած այցից յետոյ:

Սակայն այն, որ Քարեն Հիլարդը պատրաստուած է «ռիսկի դիմել ու իր ներդրումն ունենալ», վկայում է, որ Յովիկ Աբրահամեանը չի արդարացնում ամերիկացիների յոյսերը: ԱՄՆ-ն երեւում է Հայաստանի հանդէպ լուրջ ծրագրեր ունի, որը պահանջում է պայքար կոռուպցիայի դէմ: Հնարաւոր է, առանց Հայաստանի իշխանութիւնների:

«ԼՐԱԳԻՐ»

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Մոսկուայի «Միաբանութիւն» կեդրոնի ղեկավար Սմբատ Կարախանեանը հերթական անգամ հարցազրույց է տուել «Առաջին լրատուական»-ին:

Նրան կարելի է հասկանալ... Հիմա էլ լուրջ գործ է նրա ուսերին դրուած. պէտք է ամիսներ շարունակ Մոսկուայից բացատրուի, որ քանի որ Սերժ Սարգսեանի պաշտօնավարումը շարունակելու այլ ելք չունեն, գնում են սահմանադրական փոփոխութիւնների, «Բայց այսօր արտաքին բոլոր կեդրոններն ասում են՝ թէ այս իշխանութիւնը պիտի փոխուի: Իսկ այս իրավիճակում, բնական է, որ իշխանութիւնները պիտի մի բան յօրինեն, եւ սահմանադրական փոփոխութիւնները նրանց ինքնապաշտպանութեան վերջին ճիգն է: Սահմանադրական այս փոփոխութիւններն ուրիշ որեւէ այլ տրամաբանութեան մէջ չեն տեղաւորուած, հերթական շուտորոտութիւններով մտածում են, թէ ինչպէս մի մեխանիզմ ստեղծեն, որ նորից իշխանութիւնն ամբողջութեամբ հսկողութեան տակ վերցնեն»:

Ու յետոյ, քանի որ, Եւրասիական Տնտեսական Միութեան բոլոր երկրներում գործում է նախագահական կառավարման համակարգը, եւ այդ կառուցում իրենց երկրներին նախագահներն են ներկայացնում, Կարախանեանը սրտնեղած է՝ այդ երկրների շարքում որքա՞ն է յարմար Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգ ներդնելը:

Ռուսաստանն էլ չի ցանկանում, որ գործող իշխանութիւնները շարունակեն պաշտօնավարել, հարցնում են Կարախանեանին: Նա պատասխանում է. «Հարցը Ռուսաստանի մէջ չէ: Ռուսաստանն էլ չի ցանկանում, ԱՄՆ-ն էլ չի ցանկանում, Եւրոպան էլ չի ուզում, անգամ ձապոնիան ու Չինաստանը չեն ուզում: Բոլորն էլ հասկացել են, որ արդէն ժամանակը չափից շատ է անցել, ինչ արել են՝ հերիք է: Ռուսաստանի օրակարգում չկայ Հայաստանում այսպիսի իրավիճակ ստեղծելը: Ռուսաստանը ցանկանում է, որ Հայաստանը մնայ նորմալ, տարածաշրջանային ուժեղ պետութիւն: Բայց մարդիկ դա չեն անում»:

Լաւ, ամէն ինչ հասկանալի է,

Առաջին հայեացքից թուում է՝ ինչպէ՞ս կարելի է յոյսեր կապել ԲՀԿ-ից պոկուած, ռուսական ազդեցութեան դաշտում գտնուող, մի քանի կուսակցութիւն փոխած Տիգրան Ուրիխանեանի, նոյն ԲՀԿ-ից անջատուած, Ռոբերտ Քոչարեանի կողմ համարուող, եւրոպաներից ֆինանսաւորուող նախկին արտգործնախարար Օսկանեանի, իր քուէարկութիւններով հիմնականում ՀՀԿ-ին պաշտպանած նախկին փաստաբան Մարութեանի ստեղծելիք կուսակցութիւնների հետ: Բայց հանրութիւնը պատրաստ է վստահել ու շնորհակալ բոլորին՝ անգամ բազմիցս վարկաբեկուած ՕԵԿ-ին, միայն թէ յոյս արթնանայ: «ՀՐԱՊԱՐԱԿ»

Թէեւ հասկանալի էր վաղուց եւ առանց Կարախանեանի տեղեկութիւնների: Եթէ Կարախանեանը աշխարհի բոլոր անկիւններից տեղեկութիւններ ունի այն մասին, թէ որքան ատելի է Հայաստանի գործող իշխանութիւնը այդ բոլոր երկրների համար, ինչպէ՞ս է Սերժ Սարգսեանին յաջողուել արդէն 7 տարի իշխել Հայաստանում, հիմա էլ սահմանադրական փոփոխութիւններով իշխանութիւնները պահպանել...

Կամ, ո՞վ է ասել, որ Կարախանեանը կամ միւսները պէտք է տարին շարունակ խօսեն չարիք իշխանութիւնների մասին, բայց լուեն տարիներ շարունակ «հոժակու» պայքարող ընդդիմադիրների ծրագրերի տապալման պատճառների մասին ու ժողովրդին տարին շարունակ խաբելու համար:

Բա, եթէ այդքան խելօք էք, այդքան բան գիտէք, ինչո՞ւ էք այդքան դժբախտ ու անշնորհք: Սերժ Սարգսեանի իշխանութիւնն այդ ինչ գերհզօր իշխանութիւն է, որ քանի տարի է չէք կարողանում ձեռքից վերցնել, եւ ոչ միայն դուք, այլեւ՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Եւրոպան, ձապոնիան ու Չինաստանն էլ միասին:

Գուցէ Սմբատ Կարախանեանը նաեւ այս հարցերին էլ պատասխանի որպէս ամենագէտ. ձեր Ռուսաստանը չի թոյլ տուել, որ Սերժ Սարգսեանը 2008-ին եւ 2013-ին Հայաստանում նախագահ դառնայ: Իսկ ձեր Ռուսաստանը խանգարե՞լ է, որ Փետրուարին Սերժ Սարգսեանը Գագիկ Մառուկեանին ասպարէզից հեռացնի... «ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԿ ՆՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՍԲԱԳԻՐ
SOPH. UNCLY GAGNAGHIAN
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Նորի պահանջ կայ

ԱՐՄԻՆԷ ՕԶԱՆԵԱՆ

Ինչո՞ւ մեզանում նորացում տեղի չի ունենում՝ քաղաքական դաշտի, մտածողութեան, պայքարի ձեւերի, բիզնեսի, կրթական ու առողջապահական համակարգերի: Ինչո՞ւ նոր գործեր՝ գրական, գեղարուեստական, ճարտարապետական, չեն ծնուած: Այն դէպքում, որ հասարակութիւնը կարօտ է նորի. հենց դա էր պատճառը, որ մենք «գրկաբաց» ընդունեցինք էլեկտրաէներգիայի թանկացման դէմ պայքարող երիտասարդների շարժումը: Մի թեթեւ յոյս արթնացաւ՝ նորի, առաջադէմի ծնուելու ակնկալիք: Ինչո՞ւ ենք մենք՝ լրագրողներս, ամէն անգամ ոգեւորուած վազում հարցազրույցներ անելու, երբ լուրեր են սպրդում, որ այսինչը կուսակցութիւն է բացում

բոլորս հասկանում ենք, որ մեր փրկութիւնը նորացուելու մէջ է: Եւ երկիրը չի կարող մէջքը չտկել, եթէ չի նորացում քաղաքական դաշտը, եթէ նոր կուսակցութիւններ չեն ձեւաւորուած: «Բարգաւաճ Հայաստանի» անփառուական վախճանից, Հայ ազգային կոնգրէսի պատկանցումից յետոյ մի մեծ դատարկութիւն է առաջացել քաղաքական դաշտում՝ նոր կուսակցութիւնների, նոր շարժումների մեծ պահանջարկ կայ: Եւ հանրութիւնն ուրախանում է անգամ, երբ կիսատ-պուտ, իշխանական «փէշի» տակ ծուարած, ռուսաստաններից ու եւրոպաներից ֆինանսաւորուող քաղաքական պրոյեկտների մասին է լսում:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աշոտեան.

«ԵՏՄ-ին Անդամակցելով Չենք Դադարեցնում Զամագործակցութիւնը Եւրոպայի Զետ»



Միջազգային եւ անվտանգութեան հարցերի հայկական ինստիտուտէն մեր կազմակերպութեամբ Բնարկման մասնակիցները

Հայաստանի կրթութեան նախարար Արմէն Աշոտեանի հաւաստմամբ, Եւրասիական Տնտեսական Միութեան անդամակցելը չի նշանակում, որ վերջակէտ է դրուելու եւրոպական կրթական տարբեր ծրագրերին Հայաստանի մասնակցութեանը: Նախարարի խօսքով, Հայաստանը պարզապէս կրթութեան ոլորտում փորձելու է սերտ կապեր հաստատել նաեւ ԵՏՄ անդամ երկրների հետ:

Միջազգային եւ անվտանգութեան հարցերի հայկական ինստիտուտում կազմակերպուած քննարկման ժամանակ Աշոտեանը, մասնաւորապէս, նշեց. - «Բոլորնիայի սկզբունքները մէջ այս պահի դրութեամբ չկայ ավտոմատ ճանաչման սկզբունք, եւրոպական երկրները պատրաստ չեն ավտոմատ կերպով ճանաչել միմեանց դիպլոմները: Եւրասիական մոդելի պարզապէս մենք մի քայլ առաջ գնացինք, այս չորս երկրները ավտոմատ կերպով ճանաչում են իրենց հիմնական որակաւորումները:

Կրթութեան ազգային ինստիտուտի փոխնախագահ Անահիտ Բախչեանը փաստում է, որ եւրոպական չափանիշներին համապատասխան կրթութիւն ունենալու համար անհրաժեշտ է սկսել հանրակրթութիւնից: Նրա կարծիքով, սակայն, դա հնարաւոր չէ իրականացնել Հայաստանում կրթութեան ցածր ֆինանսաւորման պայմաններում:

Հայ-իրանական երկաթուղու կառուցումը Հայաստանը Դուրս Կը Բերի Թուրք-Ադրբեջանական Շրջափակումից

Հայ-իրանական երկաթուղու կառուցումը ռազմավարական նշանակութիւն ունի Հայաստանի համար, քանի որ այն երկիրը դուրս կը բերի թուրք-ադրբեջանական շրջափակումից: Այս մասին լրագրողների հետ զրոյցում ասաց իրանագէտ Վարդան Ոսկանեանը:

«Այս ծրագիրը Հայաստանի համար ունի չափազանց մեծ կարեւորութիւն, ռազմավարական եւ հոգեբանական նշանակութիւն: Մենք ամէն ինչ պիտի անենք, որ այս ծրագիրն իրականացնենք, Հայաստանը տարածաշրջանային խաչմերուկ դարձնենք եւ թուրք-ադրբեջանական շրջափակումից դուրս բերենք: Շատ ողջունելի է, որ մեր կառավարութիւնը փորձում է ակտիւօրէն համաֆինանսաւորում գտնել այս ծրագրի համար»,- ասաց նա:

Թեան ցածր ֆինանսաւորման պայմաններում: «2011-15 թուականների կրթութեան զարգացման ծրագրում հաշուարկուած էր, որ ՀՆԱ-ի չորս տոկոսը պէտք է տրուի կրթութեանը, մինչդեռ յատկացումներ արւում են 2.5 տոկոսի չափով»,- ասում է Անահիտ Բախչեանը:

Նախարարը հակադարձում է՝ քաղաքական կամք կայ, սակայն ֆինանսական միջոցներ չկան: «Ասէք, էդ մէկուկէսը ո՞ր ոլորտից պէտք է գա՞լ՝ պաշտպանութիւնի՞ց, սոցալի՞ց, առողջապահութիւնի՞ց, որտեղի՞ց»,- հարց է տալիս Աշոտեանը:

Միջազգային եւ անվտանգութեան հարցերի հայկական ինստիտուտի հետազոտական ծրագրերի ղեկավար Ստյոպա Սաֆարեանին էլ հետաքրքրում է՝ արդեօք փորձ չի՞ արուելու վերադառնալ 10-ամեայ կրթական համակարգին եւ ոլորտում ետ բերել խորհրդային ժամանակները, քանի որ Սահմանադրութեան նախորդ նախագծում նման դրոյթ ներառուած էր:

«Անկախ բոլոր պրոբլեմներից, որոնք գոյութիւն ունեն այդ համակարգում, յատկապէս աւագ դպրոցի աստիճանում, մենք չենք նախատեսում յետդարձ, մենք չենք անցնելու այլ ստանդարտների՝ լինեն դրանք եւրասիական երկրներում տարածուած, թէ ոչ»,- պարզաբանում է Արմէն Աշոտեանը:

Նշենք, որ երկաթուղու կառուցումը ծրագրուում է իրականացնել 6 տարում: Նախագծի արժէքը գնահատուած է 3.5 մլրդ տոլար: 2013թ. Իրանն իրագեկել է ՀՀ իշխանութիւններին, որ պատրաստ է կառուցել Իրան-Հայաստան երկաթուղու Ջուղա-Մեղրի իրանական հատուածը սեփական միջոցներով, երբ Հայաստանը միջոցներ գտնի իր հատուածը կառուցելու համար: 2015-ի Յունիսին CCECC ընկերութեան խորհրդի նախագահ Վու Վանլի-անգին վերահաստատել է չինական կազմակերպութեան հետաքրքրութիւնը եւ ցանկութիւնը մասնակցելու Հայաստանի հարաւային երկաթուղու կառուցման ծրագրին:

Գալուստ Սահակեան.

«Կը Վերարտադրուէինք Նաեւ Նախագահով»



ՀՀ Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեան

«Ազատութեան» հետ զրոյցում Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեանը պատասխանելով այն մեղադրանքներուն, թէ Սահմանադրական փոփոխութիւնները կը միտին իշխանութեան վերատադրման ասել է. «Եթէ կուսակցական մտածողութեամբ ենք նայում, մեզ էլ ձեռք չի տալիս, որովհետեւ երբ ասում են՝ «Կը վերարտադրուես», կը վերարտադրուէինք նաեւ նախագահով, եւ կուսակցութիւնը դրանից աւելի զօրեղ կը լինէր: Սա կուսակցական ըմբռնում է, նեղ կուսակցական... Սերժ Սարգսեանը չէր ընտրուի՝ կ'ընտրուէր մի ուրիշ հանրապետական: Այնպէս որ, այն ուժը, այն քաղաքական ուղեգրները, որին տիրապետում է Հանրապետականն այսօր, գրեթէ դեռուել է չկան», - յայտարարեց Սահակեանը՝ յաւելելով, որ դրանք չկան ոչ թէ Հանրապետականի մեղքով, այլ որովհետեւ Հայաստանում քաղաքական կուսակցութիւնները «ասֆալտային քաղաքականութիւն են վարում»: - «Ազատութեան հրապարակում միտինգ անենք, փողոցներով քայլենք, եւ ոչինչ, որ մարզերն ինչպիսին են՝ ո՛չ կառուցներ ունեն, ո՛չ ժողովրդի հետ են աշխատում»:

Վարչապետի Յայտարարութիւնը Յոյց Տուեց, Որ Իշխանութեան Խոստումներն Առոչինչ Էին

Բազմաթիւ գործարարների բարկացրել է վարչապետի յայտարարութիւնը, թէ հոսանքի թանկացումը միայն բնակիչների համար է փոխհատուցուելու:

Կառավարութեան վերջին նիստում Յովիկ Աբրահամեանը տեղեկացրել էր՝ խոշոր բիզնեսը փոխհատուցում չի ստանայ, իսկ փոքր եւ միջին ձեռներէցների հարցում դեռ յստակեցում չկայ:

Գործարար, Արտահանողների միութեան նախագահ Բաֆֆի Միչեանի խօսքով, վարչապետի յայտարարութիւնը ցոյց տուեց, որ իշխանութեան խոստումներն առոչինչ էին:

«Ինձ թուաց՝ էդ օրն Ապրիլի 1-ն է եղել, վարչապետը մեզ հետ հումոր է անում, բայց վերջը հասկացայ, որ հումոր չեն անում, եւ սա շատ վտանգաւոր քայլ է, որ իրենք այսպէս են մտածել:

«Ո՛չ Թալանին» Նախաձեռնութիւնը Իշխանութիւններին Կոչ Է Անում

Ձեռնարկութիւններին համար հոսանքի սակագնի բարձրացումը չփոխհատուցելու՝ վարչապետի յայտարարութիւնից յետոյ «Ո՛չ Թալանին» նախաձեռնութիւնը կրկին փողոց դուրս գալու ծրագիր է մշակում:

Յովիկ Աբրահամեանը կառավարութեան նիստում յայտարարել էր, որ պետութիւնը օգնելու է միայն բնակչութեանը, խոշոր բիզնեսը փոխհատուցում չի ստանալու: Փոքր ու միջին բիզնեսի դէպքում դեռ յստակեցում չկայ, վարչապետը ասել էր, որ հարցը պէտք է քննարկի նախագահի հետ:

«Ո՛չ Թալանին» նախաձեռնութիւնը վարչապետի այս յայտարարութիւնից յետոյ իշխանութիւններին «խելքները գլուխները հաւաքելու» կոչ է անում: Նախաձեռնութեան անդամ Մաքսիմ Սարգսեանի

սահմանադրական փոփոխութիւնները բարեփոխում է համարում, «որովհետեւ սա հնարաւորութիւն կը տայ նաեւ, որպէսզի կուսակցութիւնները մեծ դերակատարում ունենան»:

«Ամբողջ Սահմանադրութիւնում բաւականին լուրջ տեղ է տրուած ընդդիմութեանը: Պիտի ասեմ, որպէս քաղաքական քուրայ պառլամենտում, հնարաւորինս ռազմավարական օրէնքներ կամ նշանակումներ՝ առանց ընդդիմութեան անհնար է լինելու լուծումներ գտնել», - յայտարարեց Գալուստ Սահակեանը:

Այսինքն, այսքան պայքարը, որ տեղի ունեցաւ, որ չթանկացուի, սուբսիդաւորուի, ոչ մի բանի չի ծառայել: Փաստօրէն, մենք նորից կանգնած ենք ինչ-որ մի հակայական պատնէշի առաջ», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Արտահանողների միութեան նախագահը:

Սուրճի արտադրութեամբ զբաղուող գործարարն ընդգծեց՝ էլեկտրաէներգիայի աւելի քան 16 տոկոս թանկացումը լուրջ հարուած կը հասցնի արտադրողներին, կը բարձրանայ մատուցուող ծառայութիւնների ու ապրանքների ինքնարժէքը, կը նուազեն արտադրութեան ու ապուման ծաւալները: Նրա խօսքով, անցած երեք տարիներին հոսանքի թանկացումների պատճառով ինքն արդէն երկու անգամ բարձրացրել է սուրճի գինը:

խօսքով, ստացում է, որ բնակչութեան համար նոր սակագնի հիմնաւորուածութիւնը հարցականի տակ է եւ պէտք է աւելի անցկացուի, իսկ բիզնեսի դէպքում հիմնաւոր է:

«Եթէ սկսում են ուսումնասիրութիւն, ինչը նշանակում է, որ կասկածի տեղիք է տալիս այդ թանկացումը, այս դէպքում պիտի սուբսիդաւորուած լինէր բոլորի համար: Եթէ անհիմն է, եթէ կասկածի տեղիք տուող թանկացում է, ուրեմն չպիտի ազդի ոեւէ մէկի վրայ, քանի դեռ չի հիմնաւորուել», - ասում է Սարգսեանը:

Նախաձեռնութիւնը քննադատում է Որոտանի կասկադի վաճառքի հաշուին կատարուող փոխհատուցումը, բայց եւ ընդգծում՝ այս դէպքում էլ մասնակի փոխհատուցումը միեւնոյն է՝ բերելու է թանկացումների:

ԼՈՒՐԵՐ

«Գերմանիան Վերջապես Դեմ է Հանդես Գալիս Ցեղասպանութեան Մասին Ստին»

Գերմանիայի նախագահ Եռամսեկի Գաուկի կողմից՝ հայերի դեմ կատարված յանցագործությունների ճանաչումը շատ կարևոր է երկար տարիների լուսավորչական ջանքերի և մասին գերմանական պատմական «Zeitgeschichte» պարբերականում գրել է Յիլերիխի համալսարանի պատմության պրոֆեսոր Հանս Լուկաս Քիզերը:

Նա յօդուածում, մասնավորապես գրել է.

«2015-ի Յունուարի Հոլոքոստի յիշատակի օրը Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլինը ՄԱԿ-ի լիազորված նստաշրջանում իր ելույթի սկզբից հայերի սպանությունների 100-րդ տարելիցի յիշատակմամբ: Այլընտրանքից Գերմանիայի նախագահ Եռամսեկի Գաուկին առաջին անգամ հայտարարեց իր անտանով ելույթում կոչեց իր անունով ելույթում Միջազգային քրիստոնեաների տանջանքների մասին:

Եւ նա դա արեց լուրջ պատճառով. Գերմանիան պետք է ընդլայնի իր պատմական յիշողության հորիզոնը:

Ժամանակին կայգերական Գերմանիայի քաղաքական ղեկավարությունը որոշել էր անտեսել հայերի ոչնչացումը եւ հրաժարուել օգնել նրանց: Գերմանիայի պատասխանատուները սկսում է նաեւ նրանից, որ նա պատերազմից առաջ ուղարկված էր զարգացող երիտթուրքերի պլանների վրայ: Միաժամանակ, Գերմանիան սկսել է ռազմական ուժի եւ հրամանատարական օգնություն ցուցաբերել թուրք զինուորականներին՝ ռազմական գործողություններում:

1915-ի Մարտին Կոնստանդնուպոլսի պաշտպանությունն ուղ-



Գերմանիայի նախագահ Եռամսեկի Գաուկի

ղակիորէն կախուած էր գերմանական հրամանատարությունից եւ ռազմական փորձագետներից, բայց Գերմանիան ոչ մի կերպ չի միջամտել հայերի դեմ ծրագրուող յանցագործությունները:

Տասնամեակներ շարունակ Գերմանիայի քաղաքական գործիչներն ու դիվանագետները չէին խօսում այդ յանցագործությունների մասին, դէմ չէին հանդէս գալիս 1915-1916 թուականների իրադարձությունների մասին ստին:

Շատ շատերը, սկսած դոկտոր Յոհանես Լեփսիուսից, իրենց բոլորովին այլ կերպ են պահել: Բայց նոյնիսկ այդ համարձակ հրապարակախօսը պատրաստ էր բաց կերպով խոստովանել կայգերական ռեժիմի պատասխանատուները Հայոց ցեղասպանության համար:

Էլ աւելի կարեւոր է այսօր իրենք իրենց անունով կոչելը, որ պէսպիսի ճշմարտության ուժը յաղթանակի:

Թուրքիայի Հայկական Միակ Գիւղում Նշուել է Սուրբ Աստուածածնի Տօնը



Վախճապի գիւղի հայկական եկեղեցւոյ շրջափակը

Թուրքիայի հայկական միակ գիւղում՝ Սիրիայի հետ սահմանակից Վաքրֆլում նշուել է Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնը:

Պատարագը մատուցել են Պուստոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը եւ Վաքրֆլի քահանայ տէր Աւետիս Թաբաշեանը:

Պատարագից յետոյ արքեպիսկոպոս Աթէշեանը խաղողօրհնէքի արարողություն է կատարել: Տօնի առիթով Վաքրֆլում Մուսա լեռան շրջանում գտնուող երեմի 7 հայկական գիւղերը խորհրդանշող 7 կաթսայով հարիսա են եփել:

Տօնին մասնակցել են թուրքական խորհրդարանի հայագրի պատգամաւորներ Սելինա Դողանը եւ Կարօ Փայլանը, բարձրաստի-

ճան հիւրեր, արտերկրից եկած հայեր:

Ամէն տարի Վաքրֆլում աւանդաբար անցկացուող տօնին այս տարի աւելի քիչ մարդ է մասնակցել: Գիւղի բազմամեայ գիւղապետ Պերճ Քարթունը «Ակօս»-ի հետ զրոյցում կարծիք է յայտնել, թէ պատճառը երկրում առկայ անկայուն իրավիճակն է. շատերը ահաբեկուած են տարածքում ակտիւացած թուրք-քրդական բախումներից:

Թուրքիայի միակ հայկական գիւղը գտնուում է Հաթայի նահանգի Սամանդաղ շրջանում՝ Մուսա լեռան լանջերին: Շուրջ 130 հայ բնակիչ ունեցող գիւղը բացառապէս հայերով բնակեցուած միակ բնակավայրն է թուրքիայում:

Հերթական Կասկածելի Գործարքը

Շարունակուած էջ 1-էն

տանում եւ ընտանեկան ուղղուածութեան կենտրոն ունենալու համար վճարել 130 միլիոն տոլար: Բնակարան-գրասենեակը հսկայական ճաք ունեցող ու վթարային յիշեցնող չէնքի վերջին հարկում էր, դուռը չբացեցին, ասացին՝ տանը չէ», այսպէս կը ներկայացնէ ռատիոկայանի թղթակիցը:

Լրագրողը դիմած է նաեւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին՝ խնդրելով ներկայացնել, թէ ի՞նչ կը մտածեն այս կապակցութեամբ, եւ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումներէն յետոյ ինչպէ՞ս կը ծրագրեն աշխատիլ խաղատուն հարեւանութեամբ, թանգարան-ինստիտուտէն գերադասած են չմեկնաբանել:

Կառավարութեան որոշումէն յայտնի կը դառնայ նաեւ, որ 9.5 հեկտար հողամասէն բացի, Երեւանի քաղաքապետը «ՆՏԱԱ ինվեստմենտ Կրուփ»-ին դարձեալ առանց մրցոյթի պէտք է վաճառէ եւս 8.5 հեկտար հողամաս, որ կը գտնուի համալիրին մօտակայութեամբ:

վերաշինութեան հանգրուանին մէջ մեր ժողովուրդը օժանդակութիւններու եւ նիւթական օգնութեան չաւելեալ կարիք պիտի զգայ քան մինչեւ այսօր կատարուածը»:

Ան իր մտահոգութիւնը յայտնելով Հայկական հեռացած շուրջ 40 հազար հայկացիներու ճակատագրին առնչութիւն եւ իր խօսքը ուղղելով Սփիւռքի տարբեր գաղութներու պատասխանատուներուն, ըսած է. «Շատ պիտի փափաքիմ, որ անոնք իրենց մօտ հաստատուած

թեամբ:

«Թրանսփարենսի ինթերնէյշնլը» հակակոռուպցիոն կենտրոնի փորձագէտ Արտակ Մանուկեանի համաձայն, ակնյայտ է, որ նորաստեղծ «ՆՏԱԱ ինվեստմենտ Կրուփ»-ը հիմնադրուած է միայն այս գործարքի համար:

«Եւ այստեղ բնական հարց է առաջանում՝ արդե՞օք ունի այս ֆիրման փորձառութիւն, որո՞նք են նրա աշխատանքային պայմանները եւ որ ամենակարեւորն է՝ այս ֆիրման նոր է ստեղծուած, որեւէ բանկային երաշխիքներ, որ այս ներդրումային ծրագրի հետ ամրակցուած անհրաժեշտ է լինելու, դրամական միջոցներ եւ այլն, եւ այլն՝ որտեղի՞ց է հայթայթելու, եւ այլն: Ներդրումային ծրագրի առածը մի շարք նման կարգի հարցերի պատասխաններ պէտք է տայ, որը ներկայ պայմաններում չի տալիս», - «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին ըսած է Մանուկեանը:

Միւս կողմէ, Հայաստանի կառավարութիւնը տակաւին հարցերը չէ լուծած Համալիրի նախկին տիրոջ հետ, որու գծով դատական գործերը կը շարունակուին:

սուրիահայերուն տէր կանգնին, փնտռեն անոնց հետքերը եւ օգնեն, որ անոնք համախմբուին եւ կազմակերպուին, որպէսզի մենք բան մը չկորսնցնենք այս պատերազմին»:

Ան նշեց, որ այն, ինչ մինչ օրս կորսնցուցինք արդէն կը բաւէ սերունդներու համար. «Ես կը կարծեմ, որ կորսուածները Հայկայ մնացողները չեն, բուն կորսուածները անոնք են, որոնք գացին օտարներու գիրկը նետուեցան եւ անոնց հետք անգամ այսօր մենք չենք կրնար գտնել»:

Թրքական Մամուլը Պնդում է Որ Դատախազ Օզը Հայաստանից է Փախել Գերմանիա

Թուրք նախկին դատախազը, որը հետաքննել էր կառավարական շրջանակներում յեղաշրջման փորձի եւ խոշորամասշտաբ կոռուպցիայի մեծ հնչեղություն ունեցող գործերը, իր գործընկերոջ հետ Գերմանիա է փախել վրաստանով եւ Հայաստանով՝ իմանալով առաջիկայ ձերբակալութեան մասին: Այդ մասին գրում է թուրքական «Hurriyet Daily News» թերթը:

Հաղորդում է, թէ նա Հայաստանից Գերմանիա է թռել Օգոստոսի 11-ին: Նա ոչ մի խնդրի չի բախուել, որովհետեւ այդ ժամանակ նրա ձերբակալման հրամանագիրը դեռ ստորագրուած չի եղել: յայտնի չէ, նա դեռեւս Գերմանիայում է, թէ այլ երկիր է մեկնել:

Ձեքերիա Օզի ազգականը, որը Յունիսի 7-ի ընտրություններում Դեմոկրատական կուսակցության թեկնածու էր, մեկնաբանել է իրավիճակը՝ ասելով, որ նա չպիտի

փախչէր: Յուսուֆ Օզը պնդում է, որ իր ազգականին մանիպուլյացիայի է ենթարկել կառավարությունը՝ Արդարութիւն եւ զարգացում կուսակցության գլխավորութեամբ, եւ նա հաւանաբար փախել է, որովհետեւ չի վստահում թուրքական արդարադատության համակարգին:

«Երէկ նրան հերոս էին համարում, իսկ այժմ դատապարտում են որպէս դաւաճանի. այս իրավիճակը որոշակի կասկածներ է առաջացնում», - ասել է նա:

Ինչպէս աւելի վաղ հաղորդել էր NEWS.am-ը թուրքական մամուլը տեղեկատուութիւն է տարածել այն մասին իբր Ձեքերիա Օզն ու միւս դատախազը՝ Ձելլալ Կարան, Հայաստան են փախել վրաստանով: Բայց Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայությունը չափարարել է, որ նման անուն-ազգանունով մարդիկ մուտք չեն գործել Հայաստան:

Հայկաի Հայութիւն

Շարունակուած էջ 1-էն

լիմեան բարձր գնահատելով Հայաստանի իշխանութեան՝ ունեցած սուրիահայերը ընդունել-հիւրընկալելու բարի տրամադրութիւնը, նշեց, որ «գանգուածային տեղափոխման ծրագրի առաջադրանքով ու գործադրմամբ Հայաստանի համակարգը նեղ կացութեան մատնած

կ'ըլլանք, որովհետեւ բոլորիս համար յստակ է, որ Հայաստան չաւելեալ կարելիութիւններ չունի»:

Ան Հայկաի երեք համայնքներու կողմէ իր երախտապարտութիւնը յայտնեց մինչեւ այսօր կատարուած նիւթական օժանդակություններուն համար եւ կոչ ուղղեց շարունակել նմանատիպ ներդրումները, հաստատելով, որ «Սուրիոյ

ՅԱՐՁԱԿՈՒՄ ՔԵՄՓ ԱՐՄԵՆԻ ԴԵՍ



Պոլսոյ Թուզյա Թաղամասին մէջ գտնուող հայկական որբանոցին՝ Քէմփ Արմէնի վրայ տեղի ունեցաւ յարձակում: Ակօս Թերթին համաձայն, անծախս անձեր յարձակում գործած են որբանոցի հաւանական քանդումը կանխարգիլելու նպատակով պահակ կանգնած երկու անձերու վրայ եւ գանոնք ծեծի ենթարկած: Նոր Զարթօնք կազմակերպութիւնը այս կապակցութեամբ հրապարակեց հաղորդագրութիւն մը եւ ֆաշիստական որակեց յարձակումը: »Անծախս Թերթի անձեր ինքնաշարժով ժամանած են եւ փայտերով յարձակած հսկողներուն վրայ: Յարձակումը կանխուեցաւ, սակայն մեր երկու ընկերները ծեծի ենթարկուեցաւ: Մենք պիտի շարունակենք պայքարը եւ պիտի չչանձուինք« , ըսուած է Նոր Զարթօնքի յայտարարութեան մէջ:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ

«Քամայ Արմէն» անունով ճանչցուած մանկական ճամբարը քանդելու դէմ դիմադրութեան 100-րդ օրը՝ Օգոստոս 13 գիշերուան ժամը 23:30-ին Թուրք ծայրայե-

ղականներ մահակներով յարձակում մը կատարած են այնտեղ գտնուող հսկիչներուն վրայ: Բռնարար քի հետեւանքով պահակներէն 2 հոգի վիրաւորուած են եւ փոխադրուած հիւանդանոց:

ՄԴՀ Կուսակցութեան Լիբանանի շրջանի Վարիչ Մարմինը կը գտնէ, որ այս բռնարարը նոյն ցեղասպան մտայնութեան մէկ արտայայտութիւնն է: Վարիչ Մարմինը խստիւ կը դատապարտէ այս բիրտ գործը եւ կը զօրակցի Մայիս 6-էն մինչեւ այսօր այնտեղ դիմադրող եւ շրջօրեայ հսկողութիւն կատարող Նոր Զարթօնքի երիտասարդներուն եւ անոնց միացած բոլոր անհատներուն եւ խմբաւորումներուն: Մեր ձայնը եւ ուժերը կը միացնենք դիմադրողներուն եւ անգամ եւս կը շնորհակալուինք բոլոր պահանջներուն արդարութիւնը եւ կը պահանջենք, որ Թուրքիոյ իշխանութիւնները անյապաղ վերադարձնեն այդ կալուածը իրականութիւնը:

ՄԴՀ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

ՍԴՅԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՅԱԲԵՐ



Հնչակեան Երիտասարդներու այցելութիւնը Ետարուր

Շարունակուած էջ 1-էն

տարեցին Թանգարանին մէջ, ուր ծանօթացան հայոց պատմութեան նախապատմական հանգրուանէն մինչեւ արդի ժամանակները, եւ նոր գիտելիքներով գինուած եւ իրենց ազգային պատմութեան նկատմամբ աւելի խորացած յարգանքով ուղղուեցան իրենց ամբողջ կեանքի ընթացքին երազած, երգած եւ ոգեշնչուած՝ Մարդարապատ եան գանգակատուն: Այս գանգակատան փէշերուն վրայ նախ հաւաքական լուսանկարէ մը ետք, աչքերնին յառած դէպի հայուն ամակուռ կամքի խորհրդանիշ ցուէրուն, անոնք ունկնդրեցին «Արարատ» օրաթերթի խմբագիր Ընկ. Աւետիս Ռազմիկի (Փոշոյլեան) ոգե-

ւորիչ ելոյթին: Ընկ. Փոշոյլեան յատկապէս նշեց նախ Պանդուխտին անունը, որպէս Հնչակեան մասնակից այս ճակատագրական ճակատամարտին, որ իր ջոկատի բուռն պայքարին շնորհիւ մեծապէս նպաստած էր այս պանծալի նուաճումին, ապա շնորհակալութիւն յայտնեց այս տարածքին վրայ ինկած բոլոր նահատակ հերոսներուն, որոնց պայքարի ոգին եւ արձանագրած յղթանակի շնորհիւ է որ այսօր մենք այսօր ունինք ոչ միայն Հայաստանի Առաջին, Երկրորդ եւ Երրորդ պետականութիւնները, այլեւ ազատ եւ անկախ Արցախ եան Հանրապետութիւնը:

Ապա, Ընկեր Փոշոյլեան օրուան խորհուրդը բաժնեց երեք հատուածներու.

ՀԱՄՇԵՆԱՐԱՅԵՐԸ ԻԻՐԸՆԿԱԼՈՒԵՑԻՆ Ս.Դ.Յ.Կ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՈՒՄ



Ս.Դ.Յ.Կ. Կենտրոնական վարչութիւնում Օգոստոսի 10-ին հիւրընկալուեցին Արեւմտեան Հայաստանի Համշենի գաւառի հայազգի պատուիրակները: Կենտրոնական վարչութեան ատենապետ Յակոբ Տիգրանեանը, ողջունելով համշենահայ Հիւրերն ընդձեռնեցին, որ Թուրքիայի քաղաքականութիւնը ազգային փոքրամասնութիւնների, յատկապէս՝ հայերի նկատմամբ ամենեւին էլ չի փոխուել. համշենահայերն այսօր էլ գերծ չեն իշխանական հալածանքներէ, ինչն առկայ է հասարակական, սոցիալական, տնտեսական, կրթական, հոգե-

ւոր ու մշակութային ոլորտներում: Իսկ առաւել խոցելիին հայերէն լեզուի արգելքն է, որը պետականօրէն տանում են ուժացման:

Այնուհետեւ Յակոբ Տիգրանեան ներկայացրեց Հնչակեան կուսակցութեան պատմական անցելի, ներկայ եւ յառաջիկայ ծրագրերը: Երկուստէք հնչեցին մի շարք կարեւոր հարցեր: Կենտրոնական վարչութեան ատենապետը համշենահայերի հետ կապ հաստատելու եւ դրանք ամրապնդելու, հնարաւորինս նրանց աջակցելու եւ փոխհամագործակցելու պատրաստակամութիւն յայտնեց:

Առաջինը՝ Եղեռնէն յետոյ վերածնունդի գաղափարը՝ որ հայրենիք կերտելու, վերակառուցելու եւ բարգաւաճելու յարատեւելու հայու ապրելու տենչն էր: Ան գինուորական հմտութեան կողքին, հերոսներու պայքարելու ոգին անհրաժեշտ նկատեց հայու գոյատեւման ուղիին վրայ:

Երկրորդ՝ միամականութեան ոգին – կրօնական, մտաւորական եւ հատուածական թէ կուսակցական առումներով – որոնք այս ճակատամարտին, մէկ մարդու նման մահուկեաց պայքար մղեցին թշնամի թուրքին դէմ, անգամ մը եւս փաստելով որ հայը միշտ աւելի ուժեղ կ'ըլլայ իր միամականութեամբ:

Իսկ երրորդը՝ Մարդարապատի Թանգարանային համալիրի մէկ իւրաքանչեւութիւնն էր, որուն գոյգ կողերուն վրայ գլխաւոր ճարտարապետը կառուցած էր երկու պատուհան. մին կը յառէր Արարատին, իսկ միւսը՝ քառագագաթ Արագածին: Այսպիսով այս փայլուն հանձարը, անսալով Տիգրանի թելադրանքին, նկատի առած էր որ մենք մեր աչքերը միշտ յառած պէտք է պահենք Արարատին, որուն փէշերուն ի վերջոյ պիտի լարենք մեր վրանները:

Ընկեր Փոշոյլեանի ելոյթէն ետք, խումբը ուղղուեցաւ դէպի

Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր յուշակոթող, Միծեռնակաբերդի յուշահամալիր, ուր իրենց կը սպասէին Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան Հայաստանի, Լիբանանի, Կիպրոսի եւ Ֆրանսայի վարիչ Մարմնի անդամները: Կուսակցութեան ղեկավար կազմի ուղեկցութեամբ, մաս նակիցներէն իւրաքանչիւրը, ձեռքին սպիտակ մետաղեղ լուղուեցաւ անմար կրակին մօտ եւ նահատակներու յիշատակին նկատմամբ խոր ակնածանքով գայն գետեղեց նախանշուած տեղը: Անմար կրակին շուրջ կուռ շղթայ կազմելէ ետք, Ս.Դ.Յ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան եզրափակիչ խօսքով մասնաւորապէս հաստատեց որ այս հաւաքը ուխտի վերանորոգում է եւ թէ մենք՝ հայերս, այլեւս երբեք թոյլ պիտի չտանք որ նոր ցեղասպանութիւններ պատահին: Ապա Ընկեր Տիգրանեան Միծեռնակաբերդ ուխտագնացութեամբ պաշտօնապէս փակուած նկատեց Քսան Հնչակեան անմահներու նահատակութեան 100ամեակին նուիրուած երիտասարդական հաւաքը:

«Քսանների հաւատքով, քսան հազարներով» լրդունգին ներքոյ ընթացող այս երիտասարդական հաւաքը իր աւարտին հասաւ «Ուխտի Երգ»ով:

ԶԱԻՇՏԻ ԵՐԵԿՈՅ
 Կազմակերպութեամբ՝
Ս.Դ.Յ.Կ. Արսէն Կիտուր Մասնաճիւղի
 Երեկոն պիտի խանդավառէ ծանօթ կատակաբան՝
ՍՏԵՓԱՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
 Շաբաթ, 22 Օգոստոս, 2015, Երեկոյեան ժամը 8:00Էն սկսեալ
 Յ.Կ.Բ.Մ.ի »Կարօ Սողանալեան« սրահ
 1060 North Allen Avenue Pasadena
 Գաշափն \$30
 Մանրամասնութեան համար հեռաձայնել՝
 Առոյն 818-913-9311

«ԱՐԵՒՍՏԱՅԱՅԵՐԵՆԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ ՍԵՐՁԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ» ՆԻԻԹՈՎ ՉԱՍԱԺՈՂՈՎԸ ԵԶՐԱՓՈՎԿԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ



Հայաստանի Գիտությունների ակադեմիայի մեջ իր աշխատանքները շարունակեց Հայաստանի սփիւռքի նախարարութեան եւ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Հր. Աճառեանի անուան լեզուի հիմնարկի նախաձեռնութեամբ իրականացուող «Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման խնդիրներ» նիւթով համաժողովը:

Նիստը վարեցին սփիւռքի նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնեան եւ Պէյրութի «Բագին» ամսագրի գլխավոր խմբագիր Յակոբ Պալեան:

Հր. Աճառեանի անուան լեզուի հիմնարկի Սփիւռքի բաժնի արեւմտահայերէնի խումբի աշխատակից Սուսաննա Տիոյեան համաժողովի մասնակիցներուն ներկայացուց Լոս Անճելըսի խումբին ուղերձը (ղեկավար՝ Արտեմ Սարգսեան): Ողջունելով համաժողովը կազմակերպելու նախաձեռնութիւնը՝ հեղինակները կ'արծարծեն իրենց պատկերացումով հայոց լեզուի երկու ճիւղերու մերձեցման խնդիրներն ու ուղիները: Անոնց համաձայն՝ մերձեցումը հիմնականին մէջ կ'առնչուի բառապաշարի ոլորտին, եզրաբանութեան, նորաբանութիւններու ոլորտին մէջ կիրարկուելիք սկզբունքներուն, ուղղագրութեան եւ լեզուական այլ իրողութիւններու: Անոնք համոզուած յայտնած են այն մասին, որ գործընթացը պէտք չէ կայանայ լեզուի ճիւղերէն որեւէ մէկուն հաշուոյն: Խումբը իր պատրաստակամութիւնը չափնած է աջակցելու արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման նպաստող նախաձեռնութիւններուն:

Սուսաննա Տիոյեան ներկայա-

ցուցած է նաեւ իր՝ «Արեւմտահայերէնի ուսումնասիրութեան քանի մը հարցեր» նիւթով գեկուցումը: ՀՊՄՀ հայոց լեզուի տարրական ուսուցման ամպլոնի վարիչ Աշոտ Գալստեան անդրադարձաւ արեւելահայերէնի գեղարուեստական վաւերագրութեան արեւմտահայերէն տարրերուն: Լիբանանահայ գրող, մանկավարժ, արեւմտահայերէն դասագիրքերու հեղինակ Յարութիւն Քիւրճեանի «Արեւելահայերէն եւ արեւմտահայերէն լեզուաճիւղեր. Մերձեցումի կարելի ու անկարելի» նիւթով գեկուցումը ընթերցեց Փարիզի «Նոր Յառաջ» թերթի խմբագիր Ժիրայր Չոլաքեան: Զեկուցման հեղինակը՝ վկայակոչելով սեփական փորձառութիւնը, կը մատնանշէ մերձեցման կարելիութիւնները, որոնք հիմնուած են հայոց լեզուի եւ հայ մշակութիւնի անվիճելի միասնութեան եւ անոր բազմադարեայ պատմութեան վրայ:

ՀՊՄՀ «Սփիւռք» գիտաուսումնական կեդրոնի աշխատակից Քնարիկ Աբրահամեանի գեկուցումը կ'առնչուէր հանրակրթական դպրոցին մէջ արեւմտահայերէնի դասաւանդման արդի մարտահրաւէրներուն, ան ներկայացուց խնդիրն վերաբերեալ իր դիտարկումները:

«Այլ կերպ» խաղի հեղինակներ էլինա Մելիքեան, Անահիտ Յակոբեան եւ Սոֆիա Խաչատրեան (ԵՊՀ) պատկերաշարով ցուցադրեցին մտաւոր-ժամանցային խաղերու միջոցով հայերէնի պահպանման ու կիրարկման միտող իրենց ծրագիրը:

Հայաստանի հանրակրթական դպրոցներուն մէջ արեւմտահայերէնի դասաւանդման խնդիրներուն վերաբերեալ գեկուցումով

ԹՈՒՐՔԻԱ ԱՊՐՈՂ ՅՅ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԱՆԱՊԱՅՈՎ ՎԻՃԱԿԻ ՄԱՏՆՈՒԻԼ Լ. Էսդուգեան «Թուրքիա ներկայիս մատնուած է քաղաքական ճգնաժամի»

Եթէ քաղաքական գործիչները շուտաբայ կերպով չջաջողին այս ճգնաժամը յաղթահարել, շատ հաւանական է, որ վրայ կը հասնի տնտեսական եւ ընկերային ճգնաժամ մը եւս», «Արեւելք»-ին չափնեց «Ակոս»-ի հայկական բաժնի խմբագիր Բագրատ Էսդուգեան:

Էսդուգեան նաեւ նկատել տուաւ, որ Թուրքիոյ հասարակութիւնը բոլորովին դէմ է Սուրիոյ քաղաքացիական պատերազմին մասնակցելու Անգարայի որոշումին՝ նշելով, որ «նախագահ Էրտողան, կոիւներու առաջին օրէն իսկ, իր կողքին գտնելով Միացեալ Նահանգները, Եւրոմիութիւնը, Սէնտական Արաբիան եւ Քաթարը՝ մեծ ոգեւորութեամբ ուխտած էր վերջ տալ Ասատի իշխանութեան:

Բայց երբ Արեւմուտքը տեսաւ արմատական իսլամ գինեալ հրոսախումբերու սպառնական վտանգը, հրաժարեցաւ ի գին ամէն բանի Ասատը տապալելու իր նախկին մտադրութենէն: Աւելին՝ արեւմտեան մամուլը ծանրօրէն քննադատեց Թուրքիան՝ «Իսլամական պետութիւն»ը հովանաւորելուն համար»:

2002-էն ի վեր բոլոր ընտրութիւններէն յաղթանակով դուրս եկած Արդարութիւն եւ Բարգաւաճում կուսակցութիւնը Յունիս 7-ին կայացած խորհրդարանի ընտրութիւններուն կորսնցուց միահեծան կառավարութիւն կազմելու բախտը: Այժմ նախագահ Էրտողան կ'ուզէ ժողովուրդներու ժողովրդավարութիւն կուսակցութիւնը վարկազրկելով եւ նոյնիսկ գաջն արգիլելով՝ կանխահաս ընտրութեանց դիմել, յուսալով, որ սրուած պատերազմի պայմաններուն տակ ետ կը ստանայ ազգայնականներուն ձայները:

Պատասխանելով այն հարցումին, որ արդեօք ընթացող դէպքերը կրնա՞ն ծաւալիլ երկրի տարբեր շրջաններուն մէջ՝ Էսթուգեան ըսաւ. «Շատ հաւանական է, որ գետնի վրայ արձանագրուած դէպքերը ծաւալին դէպի տարբեր քաղաքներ: Նշենք, որ գլխաւորութեամբ Պոլսոյ, Անգարայի եւ Չիւրլուքիոյ, Թուրքիոյ բազմաթիւ քաղաքներու մէջ քիւրտեր եւ թուրքեր, սիւննիներ եւ ալաւիներ կ'ապրին կողք կողքի: Վերջապէս,

հանդէս եկաւ ԵՊՀ դասախօս Գայիանէ Գէորգեան: Ելոյթ ունեցան նաեւ սփիւռք-



անցեալի փորձերով գիտենք, թէ գաղտնի ծառայութիւնները դիւրաւ կրնան շահագործել ազգայնականներէ բաղկացող խումբան մը, որ առանց վարանելու կրնայ դիմել զանգուածային մարդասպանութեանց: Նախորդ դարասկիզբին, «դրախտը եօթը դռներ ունի, եօթը հայ սպաննողը ուղիղ դրախտ կ'երթայ» ըսելով համոզած էին վայրագ քիւրտերը:

Իրողութիւն է, որ այս պատմութիւնը այսօր ալ յաճախորդ կրնայ գտնել Թուրքիոյ մէջ»:

Էսդուգեան նաեւ նշեց, թէ հակուռակ անոր, որ ներկայ պահուն պոլսահայութեան համար վտանգ չկայ, «պատերազմի պայմաններուն մէջ քամին չանկարծ ուղղութիւն կրնայ փոխել, հետեւաբար՝ յիմար միամտութիւն մըն է «մեզի բան չըլլար» կարծելը: Յիշողութիւններու մէջ շատ թարմ է այն իրողութիւնը, որ հալչպահայութիւնը պատերազմի ծագումէն ետք երկար ժամանակ կառչեցաւ այդ միամիտ խաբկանքին առթած ապահովութեան զգացումին», նշեց պոլսահայ խմբագիրը:

Բագրատ Էսդուգեան նաեւ խօսեցաւ Թուրքիա հաստատուած ՀՀ քաղաքացիներուն մասին՝ նկատել տալով, որ «Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները բնականաբար անապահով պիտի զգան, քանի որ գերծ պիտի մնան նաեւ պետական ապահովութենէն, տրուած ըլլալով, որ բոլորն ալ փախստականի կարգավիճակի մէջ են: Անոնք իրենց ապահովութիւնը պիտի փնտռեն տեղուոյն հայերուն մօտ»:

եան կրթօժաններու ուսուցիչներ՝ Շար.ը էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեցող է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ԵՎ ԿԱՏԱՎԱԿՄԱՆ 100 ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՄԱՅՐ ԶԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ



Օգոստոս 8-ին Երեւանի Յակով Պարոնեանի անուան պետական ակադեմիական թատրոնին մէջ տեղի ունեցաւ Հնչակեան Քսան կախաղաններու նահատակման 100րդ տարելիցին նուիրուած պաշտօնական ձեռնարկը:

Քաջման խօսքով, «Արարատ» օրաթերթի տնօրէնուհի Անի Եփրեմեան ողջունեց ներկաները եւ վանաստեղծական շունչով ներկաները փոխադրեց Քսաններու նահատակման վերջին վայրկեաններ եւ անոնց ապրումները փոխանցեց ներկաներուն:

Անի Եփրեմեան ապա վեմ հրաւիրեց ՀՀ Սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեան, որ հակիրճ խօսքով անդրադարձաւ հայ երիտասարդներու հայրենիք այցի անհրաժեշտութեան մասին: ԿեդրոնաՆալով յատկապէս իսլամացած հայերու հայրենադարձի մասին, ան ուրախութեամբ յայտարարեց որ անոնց հաջութեան գիրկ վերա-

դին եւ անցած ճանապարհին:

Օրուան գլխաւոր բանախօսն էր Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ Յակոբ Տիգրանեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Այսօր, պատմութեան հարիւրամ-



եայ բարձրունքից վերլուծութիւններ կատարելը գուցէ դիւրին է, սակայն նոյն այդ պատմութեան դէմ չմեղանչելու համար մենք պարտաւոր ենք նշել, որ քսաներորդ դարասկզբի քաղաքական վարդ իրավիճակների մէջ Փարամազն ու նրա ընկերները այն հազուադիւտ, եթէ ոչ միակ ուժը հանդիսացան, որ ճիշտ կողմնորոշուեցին քաղաքական վարդ ու ճակատագրական իրավիճակներում»:

Ընկ. Տիգրանեան եզրակացնելով իր խօսքը ըսաւ. «Իր գոյութեան ողջ շրջանում Սոցիալ Դեմոկրոտ Հնչակեան Կուսակցութիւնը միշտ էլ եղել է արդարութեան, հաւասարութեան եւ Հայրենիքի ամրապնդման համար մղուող պայքարի առաջամարտիկների շարքում:

«Արդարութիւնն ու ընկերային հաւասարութիւնը այն սիւներն են, որոնց վրայ պիտի հիմնուեն մեր յետագայ յաջողութիւնները: Ներքին ամուր քաղաքականութիւնը մեր երկրի հզօրացման



առաջին եւ անփոխարինելի գրաւականն է:

«Այսօր, վերոնշեալ բոլոր հարցերի, ինչպէս նաեւ մեր հպարտ Արցախ Աշխարհի ինքնորոշման հարցը միջազգային ատենաներում ամրագրելու գործում՝ մենք պատրաստ ենք ներդնել մեր կուսակցական ողջ ներուժն ու կարողութիւնները:

«Թող մեզ, մեր յետագայ աշխատանքային նուաճումների մէջ գօրաւիզ լինեն անմահ քսանների անպարտելի ոգին, հայ ժողովրդի անկորտում կամքը եւ նրա խորախորհուրդ միտքն ու մեծ Միասնութիւնը:

«Այն միասնութիւնը, որի համար հայ ժողովրդի շատ ու շատ արժանաւոր զաւակների հետ միասին դէպի անմահութիւն քայլեցին նաեւ հնչակեան քսան երեւելիները...»:

Ընկ. Տիգրանեանի խօսքին ետք, մեկնարկեց ձեռնարկի

գեղարուեստական բաժինը, որուն ընթացքին «Նոր Սերունդ» Մշակութային Միութեան պարախումբը թնդացուց բեմը անկրկնելի պարերով, իրենց ելոյթը աւարտելով կուսակցութեան 125ամեակին նուիրուած պարային շարքով: Կարժէ մատնանշել յատկապէս, որ այս առիթով ՀՀ Սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեան ականատես ըլլալով Նոր Սերունդի ոգեւորիչ պարային կատարողութեան, պաշտօնական հրաւէր ուղղեց Միութեան ղեկավարութեան, որպէսզի յառաջիկայ տարի խումբը իր ամբողջական կազմով ներկայ գտնուի Երեւանի պարային փառատօնին, որուն կը մասնակցին հայկական լաւագոյն պարախումբերը աշխարհի տարածքին:

Ձեռնարկը պսակուեցաւ Յարութ Մուրատեանի եւ Սմբատ Խալաթեանի ազգային եւ կուսակցական երգերու մեկնաբանութեամբ:



դարձի լաւագոյն նմուշներէն մին է՝ տակաւին վերջերս իսլամացած հայերէն մին Փարամազի վուն անունով՝ Մատթէոս Սարգսեանի անունով քրիստոնեայ մկրտումը:

Տիկ. Յակոբեանի խօսքին ետք բեմ բարձրացաւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի տնօրէն Աշոտ Մելքոնեան, որ հակիրճ պատմականը կատարեց Ս.Գ.Հ.Կ.ի ծնուն-

COMING SOON

1001 nights

Authentic Middle Eastern Mediterranean Lebanese Cuisine

1001 Nights

WORLD-CLASS HOOKAH LOUNGE ENTERTAINMENT PLEASANT INDOOR OUTDOOR SEATING

1829 S. Brand Blvd., Glendale, CA 91204 | 818.552.1001

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ՄԱՐԻԵԱՆ

Կազմակերպութեամբ
ԹԵՐԵԷՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՆ ՍԿՈՒՅԵԱՆ
և ու ԱՐՄԵՆԻԱԿԱՆ ՍԱՆՏԻՄԻՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԿԱԿԵՆՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆ ԿՈՍԱԿԿՈՒԹԻՒՆԸ
ԸՆԹԱՅԻՆ ԵՒ ԵՏՔ
Եղբոր կ'անունայ
ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ՄԱՐԻԵԱՆ
Բազմամեայ տնօրէն
Պէրոսի Գայ Անեաբաճաճական Գոլճի (1967-10)
Գաղափարային և մտքային
ցնայութեամբ լրագրող
ՅԱՐՈՒԹ ՏԻՐ ԴԱԽԻԹԵԱՆ
Գոլճի շրջանապատ
ԵՐԵՎԱՆԻ, ՕԳՈՍՏՈՍ 25, 2015
Երկրպետ ժամը 8:00-ից
Թ.Մ.Բ. ՊԵՏԼԵՍԻՍԻՍԻՍԻՆ ԿԵԳՐՈՒՆ
1901 N. Allen Ave., Alhambra, CA 91801
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ | ՄՈՒՏԵՐ ԱՅՍ

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին

ՌՈՒՍԱՐԱՅԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅ՝ ԱՐԱ ԱՔՐԱՅԱՄԵԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԵՋ



Քանի մը օրէ ի վեր Լոս Անճելոս կը գտնուի Ռուսաստանի Միութեան նախագահ Արա Աբրահամեան, ընկերակցութեամբ իր տիկնոջ:

Այս առիթով Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերբ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Չորեքշաբթի Օգոստոսի 12ին ընթրիքով մը պատուեց ազգային բարերար Արա Աբրահամեանը: Առանորդարանի Գալաչեան սրահին մէջ տեղի ունեցած սոյն մեծարանքի երեկոյին ներկայ էին շուրջ 250 հրաւիրեալներ, որոնք կը ներկայացնէին հարաւային Գալիֆորնիայի ազգային, քաղաքական, կրօնական եւ բարեսիրական տարբեր կազմակերպութիւններ եւ աւանդական կուսակցութիւններ:

Իր ողջոյնի խօսքին մէջ առաջնորդ Յովնան Սրբազան բարձր գնահատեց շուրջ երկու տասնեակ տարիներէ ի վեր իրեն ծանօթ Ռուսաստանի Հայերու Միութեան նախագահ Արա Աբրահամեանի բազմակողմանի արժանիքները: Արդարեւ ան գործնական աջակցութիւն ցուցաբերած է 450 կազմակերպութիւն ունեցող Ռուսաստանի դաշնութեան հայերուն, Հայաստանի տարբեր կառույցներուն, ինչպէս նաեւ կարեւոր բարերարութիւն ըրած է Արեւմտեան Թեմի ազգային առաջնորդարանին: Ան նիւթապէս սատար հանդիսացած է նաեւ Լա Գրեանթայի Հայաստան-

եայց Առաքելական եկեղեցւոյ կառուցման գործին մէջ:

Պատասխան խօսքով հանդէս եկաւ Ռուսաստանի հայերու Միութեան նախագահ Արա Աբրահամեան: Ան ընդարձակօրէն անդրադարձաւ Համաշխարհային Հայկական Գոնկրէսի հիմնադրութեան (2003) նպատակներուն եւ հայրենանուէր կառուցողական առաջադրանքներու վրայ: Իր ելոյթին յայտնի եղաւ որ Ռուսաստանի Դաշնութեան շուրջ 650 քաղաքներուն մէջ այժմ բնակութիւն հաստատած են մօտ 3 միլիոն հայեր, որոնք կարիք ունին ընկերա-մշակութային օժանդակութիւններու: Ան որպէս համաշխարհային Հայկական Գոնկրէսի նախագահ ցաւ յայտնեց, որ լրիւ չէ կրցած իրագործել ծրագրուած ազգօգուտ եւ հայրենանուէր առաջադրանքները: Այս սուհանդերձ, յոյս յայտնեց որ մօտաւոր ապագային, նոր եռանդով գործի պիտի լծուի, տարբեր հանգրուաններով իրագործելու անցեալի ծրագիրները:

Պր. Արա Աբրահամեան Ռուսաստանի նախագահ Փութինի հետ մօտէն ծանօթ ըլլալով կը յուսայ ապահովել անոր աջակցութիւնը իր ծրագիրներու յաջողութեան համար: Այս առիթով քուլիսներու ետին գրոյց կը շրջի, որ Աբրահամեան թեկնածու է Հայաստանի յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն...:

Կիլիկեանցիներու Միօրեայ Պտոյտը Սան Տիէկօ



Կիլիկեանցիներու խմբակարգը Սան Տիէկօ Բաղաֆի կեդրոնական հրապարակներէն մէկուն վրայ

ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ

Օգոստոս 9-ի առաւօտեան ժամը 8-ին միօրեայ պտոյտ մը կատարելու նպատակաւ խումբ մը կիլիկեանցիներ ուղղուեցան դէպի Սան Տիէկօյի շրջանը՝ իրագործելու

վարչութեան կողմէ պատրաստուած հիանալի ծրագիրը ու վայելելու ծովային տեսարժան վայրերն ու կղզիները :

Համախմբուած մօտաւորապէս 50 կիլիկեանցիներէ բաղկացած պտոյտը սկիզբ առաւ Տէրունական

ԴՈԿՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՄԱՐԱՆԵԱՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ «ԱՒ, ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ»


Անցեալ երեքշաբթի Օգոստոսի 11ին, 2015, «Ապրիլ» գրատան նախաձեռնութեամբ գրատան հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ ծանօթ գրող եւ հրապարակախօս Դոկտ. Յովհաննէս Աճմարանեանի նոր լոյս ընծայած «ԱՒ, Լոս Անճելոս, Լոս Անճելոս» գիրքի շնորհանդէսը:

Իր բացման խօսքին մէջ Ապրիլ գրատան սեփականատէր՝ Առնօ Երէցեան ողջունեց ներկաները եւ ըսաւ. թէ՛ կը շարունակէ իր հօր բարի սովորութիւնը հայ գիրքը մասնաւորաբար ծանօթացնել ընթերցասէր հասարակութեան:

Ծանօթ մտաւորական Անթուան Գարամանլեան հանգամանօրէն ծանօթացուց Դոկտ. Յովհաննէս Աճմարանեանը որպէս հեղինակ բազմաթիւ եւ բազմալեզու գիրքերու: Ան հրատարակութեան համար ունի տասնեակ մը աշխատասիրութիւններ:

Վերջերս կայացաւ վերջին երկու գրքերիս շնորհանդէսը՝ գրասէրների, մտաւորականների եւ գրողների հոծ բազմութեամբ: Պրոֆեսորը այդ հանդէսի գլխաւոր բանախօսներից էր: Նրա ելույթը դրուած էր առաջինը: Ժամը հասաւ, իսկ նա դեռ չկար: Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանը, որ հանդիսավարն էր, յայտնեց իր մտահոգութիւնը: Հանգստացրեցի: Զգիտես ինչո՞ւ, համոզուած էի, որ կը գայ: Եւ Դոկտորը, որոշ տեղաշարժեր կատարելով ելույթ ունեցողների հերթականութեան մէջ, բացեց հանդէսը «միայն իրեն յատուկ հանդիսաւորութեամբ» հանգամանորէն ներկայացնելով գրողի երկարամեայ գործունէութիւնը եւ ձեռքբերումները:

Երեկոն ընթանում էր սահուն: Գրեթէ մէկ ժամ անցել էր: Եւ... Ահա, նա եկել էր (իրեն գալը չէի տեսել): Հանդիսավարն սկսեց ներկայացնել Պրոֆեսորին՝ թուարկելով նրա բազում բարեմանութիւնները, այդ թւում նրան, իրաւացիօրէն, անուանելով «Հայաստանի դեսպանը արտասահմանի հայութեան մօտ» եւ «Արտերկրում ապրող հայերի դեսպանը՝ հայրենիքում»: Նաեւ զարմանք յայտնեց, թէ ինչո՞ւ չէն կարողանում օգտագործել Հայաստանում «այս քայլող հանրագիտարանը՝ մի պատասխանատու պաշտօնում: (Միջանկեալ ասեմ, որ Պրոֆ. Օ. Քեշիշեանը իր ելույթի մէջ անդրադառնալով այս հարցին իրեն յատուկ ուղղախօսութեամբ պիտի պատասխանէր. «Հայաստանի իշխանութիւնները դեռ պատրաստ չեն ախպարին ընդունելու»):

Վերջապէս Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանը բեմ հրաւիրեց Պրոֆեսորին:

Նա բեմ բարձրացաւ եւ սկսեց. Նախ ներողութիւն եմ խնդրում ուշանալուս համար: Sherman Oaks-ից հասայ Փաստիւնա: Մէկուկէս ժամ է ազատուող վրայ եմ, բայց Սոնիա Մկրեանի համար արժէ մէկուկէս ժամ քշել: (Նրա խօսքերը շատ դպան սրտիս): Նշանակում է, իմ իր հանդէպ զգացածս սէրն ու յարգանքը փոխադարձ էր:

Ապա, նա հանգամանորէն վերլուծեց «Խճանկար» հատորս օշին-խանական խորատեսութեամբ: Ուրախալիօրէն զարմացայ, երբ տեսայ որ նրա աչքից չէր վրիպել գրքիս «խորհուրդ խորին»-ը: Նա մատը դնելով տողերիս վրայ, կարդաց ամփոփ խոստովանանքս.

«Կեանքս եղաւ անսպառ սիրոյ այրում ու զոհաբերում: Ես այրուել եմ անձայն, երբեմն միացել, բայց սէրս յաղթել է եւ կրակը վառ պահել: Հոգիս սաւառնել է բարձր ոլորտներում:

Իմ ներաշխարհը ապահովել է իմ անդորրը: Լաւագոյնս անելու մղումը կեանքում հարթել է ճանապարհս, քանցի այդ արել եմ Բարձրեալի ողորմութեանն ապաւինած»:

Անդրադարձայ, որ մեր ծանօթութիւնը, թող ներուրի՝ ասել բարեկամութիւնը, աւելի քան երեք տասնամեակի պատմութիւն ունէր՝ սկսած անցեալ դարի 80-ականների առաջին կեսից:

Ես իր մէջ մեծապէս գնահատում էի հասուն, անսեթեթ մտաւորականի ողջախոհութիւնը: Նաեւ դիպուկ, հակիրճ եւ ըստ էութեան արտայայտուելու կարողութիւնն ու անկեղծութիւնը:

Միշտ զբաղուած, միշտ գործօն, միշտ պատենչի վրայ էր: Ինքն ամենուրեք էր եւ ամէն ինչի մէջ:

Իմանալով, որ նա Armenian Observer-ի հիմնադիր տնօրէն-խմբագիրն է, ես ժամանակ առ ժամանակ իրեն էի ուղարկում նոր գրածս բանաստեղծութիւնները, որ տպագրի, անշուշտ, ձգտելով մնալ իր թերթի չափանիշներին չարմար մակարդակի վրայ: Նա, մի գուցէ առանց գիտակցելու, օգնել է ինձ որպէս գրող կայանալուն: Բերեմ մի քանի դրուակ.

Ութսունականների վերջին սկսել էի անգլերէն բանաստեղծութիւններ գրել: Նրանցից մէկն արժանացել էր մրցանակի: Ուրախութիւնս կիսելու համար, փոստով ուղարկեցի իրեն որ տպի. (այն ժամանակ իմէյլ չկար): Ստացել էր եւ զանգեց.

-Գիտէ՞ք տիկ. Մկրեան, կարդացի առանց ստորագրութեանը նայելու եւ մտածեցի. ինչքա՞ն նման է Սոնիայի գրելաձևին եւ նրա արտայայտած զաղափարներին: Ապա տեսայ, որ տակը Ձեր ստորագրութիւնն է:

Գրել էի տիեզերքի մասին: Լաւ չիշուեմ եմ, այն վերջանում էր այսպէս.

An unnamed melody
Sent by astral infinity
Trembles on my lips as a kiss.
Պիտի ասէք «թէ բանաստեղծները հագուազէպ են անդրադառ-

ՀԱՅ ԵՐԳԸ ՈԳՈՒ ՍՆՈՒՆԴ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Դարերից մեզ առանդաբար փոխանցուած եւ մեր ժամանակներէ արուեստագէտներէ ստեղծագործութիւններով ճոխացած հայ երգն ու երաժշտութիւնը հայապահպանման կարեւոր կռուան եւ հիմնասիւն են, որոնք սրտցաւ հոգատարութեան եւ հովանաւորութեան կարիքն են զգում նրանց անաղարտ պահելու եւ դէմն առնելու օտար անորակ, խորթ եւ անյարիր երգերի, շարժումների եւ հագնուածքի տարածման, քանզի հայ երգն ու երաժշտութիւնը՝ ժայռերի կրճից ժայթքող աղբիւրների կարկաչ են, եկեղեցւոյ զանգերի քնքշածոր ղողանջ են, ալեաց մեղմաշունչ ծփանք են, արեւաերանգ հասկերի քնքշաշրշիւն օրօրանք են, մաճկալի քրտնաթոր հորովել են, հայրենասէր հերոսի գովերգ են, հոգեպարար ու հոգեզմայլ պատարագ են, արեւածագի ստիակների գեղգեղանք են: Այո՛, այսպիսին են մերը, մի փոքրացուած երկրի, քարքարոտ աշխարհի, ցեղասպանութիւն տեսած ժողովրդի երգն ու երաժշտութիւնը պանծալի:

Մենք ինչպէս երախտապարտօրէն փառաբանում ենք Մեսրոպ Մաշտոցին մեր լեզուի եւ դպրութեան արարիչին, նոյնպէս՝ Կոմիտաս վարդապետին որպէս հայ երգի ու երաժշտութեան արքային: Կոմիտասը յայտնաբերեց, հաւաքագրեց, փրկեց, մաքրագտեց մեր ժողովրդական երգերն ու մոռացութիւնից ի յայտ բերեց մեր հայկական ձայների խաղերը: Փառք ու պատիւ նրանց արեւավառ յիշատակին, որ իրենց առաքելութեամբ յաւերժութեան ջահեր վառեցին հայ ժողովրդի գոյութեան ճանապարհին: Այդ ճանապարհը պիտի շարունակուի նորերով նախնաձախնդրօրէն ազգային ոգուն հաւատարիմ հարստացնելով եւ առաւել ճանաչելի դարձնելով մեր երգն ու երաժշտութիւնը առ ի հպարտանք մեզ որպէս ինքնուրոյն եւ հարուստ մշակոյթի տէր երկիր եւ ժողովուրդ:

Հայ երգն ու երաժշտութիւնը հարուստ են տարբեր կատարումներով՝ ժողովրդական, աշուղա-

կան, վոկալ, երգչախմբային, էստրադային, ջազային, օպերային, պարային, սիմֆոնիկ եւ այլն: Այսպէս հրաշալի երգով ու երաժշտութեամբ մեր ունեցուածքը հարկ է ամենուր հնչեցնել եւ պրոպագանդել, ոչ թէ նուազ վերաբերմունք նրանց հանդէպ մեր խնճոյքներում, հարսանեկան հանդէսներում եւ պատրաստուած տեսաժապաւէններում, այսպէս մոռանալով մերը եւ յաճախակի հնչեցնելով այլոցը անտարբերութեան սերմեր ենք ցանում նոր սերնդեան հոգիներում եւ ուղեղներում, յետոյ ասում ենք՝ մեր երեխաները հայ երգեր ու երաժշտութիւն չեն լսում, դա մեծերից է գալիս, ծնողներն ու պատասխանատուներն են անուշադիր:

Արդեօք դուք չիշո՞ւմ էք օտարները իրենց ընկերային խնճոյքներում մեր երգերը կ'երգե՞ն, կարելի է մասամբ լինի, սակայն մեր մէջ օտարների երգն ու երաժշտութիւնը շատ աւելին են հնչում: Ինչո՞ւ պէտք է այսպէս լինի մերիկի նկատմամբ, չենք ասում չլսել այլոց երաժշտութիւնը, քաւ լիցի, լսել գողտրիկը եւ հաճոյք տանել, սակայն ամէն ինչ իր տեղն ու սահմանը, չափն ու կշիռն ունի, մեր այս տեսակ մօտեցումը հակակրօն է, ընդհակառակը այլ ժողովուրդների արժէքների նկատմամբ խոր յարգանք ու ակնածանք ունենք, քաջ գիտակցում ենք, որ երգն ու երաժշտութիւնը ժողովուրդներին իրար են մօտեցնում եւ քաղցր յարաբերութեան միջոց դառնում:

Մենք չենք ասում՝ շատ առաւել ենք, ըստ Պարոյր Սեւակին՝ մենք մեզ չենք գերադասում, բայց մեզ էլ հայ են ասում, չէ ո՞ր մենք էլ արժանապատուութիւն ունենք, մենք էլ գանձեր ունենք, որոնց պէտք է ուշադրութիւն դարձուի: Հաւատացած ենք երաժշտութիւնը հոգի՝ է ազնուացնում, ուրախութեան զգացում է առաջացնում, որ այդպէս է, ինչո՞ւ օտարների մօտ մեր նման յաճախակի մեր երգն ու երաժշտութիւնը չի հնչում, հարցը մտածել է տալիս, այստեղ մի բան այն է, ինչ որ մենք ենք ցանկանում:

ՎԱՅԱՆ ՏԵՐԵԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ ԻՐ ՀԱՅՐԵՆԻ ԶԱՒԱԽՔ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Երբ կը յոգնես, կը ձանձրացնա աշխարհից, Դարձիր ինձ մօտ, վերադարձիր դու նորից...

Վահան Տէրեան

Հիասքանչ Փարվանա լիճին մօտակայքը գտնուող Գանձա գիւղին մէջ է հայ մեծ գրող Վահան Տէրեանին տուն-թանգարանը:

1966-էն ի վեր ամէն տարի այդ բնակավայրին մէջ մեծ հանդիսաւորութեամբ Տէրեանական օրեր կը նշուին, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն Հայաստանի ու Վրաստանի քաղաքական ու մշակութային գործիչներու տարբեր պատուիրակութիւններ: Ամէն տարի աւելի ու աւելի մեծ խումբերով անոնց կը միանան մեծ բանաստեղծի քերթողութեան սիրահարները, երեւոյթ մը, որ այդ ձեռնարկը կը վերածէ իրական ու մեծ տօնախմբութեան:

Վահան Տէրեանի տուն-թանգարանը ստեղծուած է 1957 թուականին, Վրաստանի Բողոքակալ շրջանի Գանձա գիւղին մէջ, գրողի ծննդավայր հայրական տան հիման վրայ, ուր անցած են Տէրեանին մանկութիւնը, ապա եւ ամառնային արձակուրդները, երբ ան 1897-1917 թուականներուն ուսանող էր Թիֆլիսի, Մոսկուայի եւ Փետրապոլի մէջ:

Այդ տան մէջ 1901-ին հիւրընկալուած է Յովհաննէս Թումանեան, իսկ 1905-ին՝ Աւետիք Իսահակեան: Այստեղ է, որ հմայուած գիւղի դրացնութեամբ գտնուող Փարվանա լիճի գեղեցկութեամբ՝ մեծ Թումանեան գրած է իր անմահ՝ «Փարվանա» առասպելը:

Ներքին կահաւորումով հանդերձ վերականգնուած տունին կից, 1973 թուականին կառուցուած է նաեւ ցուցասրահ, ուր ներկայացուած փաստաթուղթերը, ձեռագիրներն ու լուսանկարները կը ներկայացնեն Վահան Տէրեանի կեանքն ու ստեղծագործական ուղին:

Յուցասրահին մէջ կարելի է տեսնել նաեւ բանաստեղծի երկերուն հայերէն, ռուսերէն, եւ այլ լեզուներով հրատարակութիւններն ու տէրեանագիտական ուսումնասիրութիւնները:

Վահան Տէրեանի տուն թանգարանի բակին մէջ կանգնեցուած է անոր կիսանդրին: Թանգարանի համալիրին մէջ է նաեւ Սուրբ Կարապետ եկեղեցին, գոր 1852 թուականին կառուցած է հանձարեղ բանաստեղծին մեծ հայրը՝ Տէր Գրիգոր: Ուրախալի փաստ է, որ Տէրեանական օրերուն գողգահեռ կեանքի կոչուած է նաեւ «Վերադարձ» բակային ճամբարը, որուն կը մասնակցին քանի մը տասնեակ հայ երեխաներ:

Նպատակը երեխաներուն ազգային, բարոյական եւ գեղագիտական դաստիարակութեան իրականացումն է, անոնց մօտ ազգային արժէքներու գիտակցութեան ձեւաւորումը:

Անշուշտ Վահան Տէրեանի կեանքի, քերթողութեան, մանկութեան յուշերու մասին երեխաներու իմացութիւնը այդ դաստիարակութեան բաղկացուցիչ մասը կը կազմէ: Ըստ այնմ ալ ճամբարի իւրաքանչիւր օրը, խաղերէն եւ դասընթացներէն զատ, յազեցած են «տէրեանական շունչով»...

ՊԵՏՐՈՍ ՄՈՒՇԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

րուն եւ անոր խորամանկ կարգադրութիւններուն եւ անոյ լեզուի յաջողութիւններուն:

Վերջին տարիներուն, Պետրոսի աչքի լոյսը դարձած էր «Լուսաբաց» շաբաթաթերթը եւ շատ գոհ էր որ յանձին հայերէն լեզուագէտ Եփրեմ Թոքլեանի եւ անոր աշխատակից Յովսէփ Գանքուրեանին, Ռուստիֆ Չարըքճիին եւ Նուպար Փոլատեանին, թերթը լաւ ընթացքի մէջ դրուած էր: Ուստի, կը խնդրուի որ Պետրոսի յետ մահու փափաքը գոհացնելու համար ձեր փոխան ծաղկեպսակի նուրաստութիւնները կատարէք «Լուսաբաց» շաբաթաթերթին:

Գրեթէ ամիս մը առաջ, Պետրոս՝ «Լուսաբաց» թիւը ձեռքին, հիւանդանոցի իր մահճակալին դուրս գալով, մեծ հաճոյքով նստեցաւ, ստանալու Փարամազի շքանշանը ձեռամբ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետին: Ըստ Նուարդի, շատ ուրախ էր այդ օր եւ ամէն ցաւերը

մոռցած էր:

Այսօր, եւ ճիշդ այսօր, Հայաստանի մէջ ի ներկայութիւն աւելի քան 250 սփիւռքահայ Հնչակեան շարքային պատասխանատուներու եւ երիտասարդներու, տեղի կ'ունենայ Քսան Կախաղաններու Հարիւրամեակին եզրափակիչ պաշտօնական հանդիսութիւնը: Կասկած չկայ որ Պետրոս հոն պիտի գտնուէր եթէ իր ֆիզիքական վիճակը ներէր: Ան մեռաւ որպէսզի իր հոգին ճարելով երթայ Հայաստան ըլլալու համար հոն իր ընկերներուն հետ եւ անոնց հետ տօնելու իր պաշտած կուսակցութեան անմահացած քաններու մարտիրոսացման հարիւրամեակը:

Հանգիստ, յաւերժ հանգիստ, սիրելի «Մուսալէմ» Պետրոս, եւ ձեզի ալ հարազատներ ու կուսակցական ընկերներ ու բարեկամներ Պետրոսի յիշատակով ապրիք եւ վաստակով մխիթարուիք:

Յաճախ ինձի կ'ըսէր, «Մարհապա եա Ռայցէս»։ Հիմա ալ ես իրեն կ'ըսեմ «Ալլա մա'աք եա Ռայցէս»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐԵՎԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐԵՎԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՒԹԵԱՆ
Հ.Բ.Ը.Մ. ՍԱԹԱՍԵԱՆ ԹԱՍԵՐԱՆՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ՀՊԱՐՏՈՒԹԵԱՄԸ ԿԸ ՆՇԷ
ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՏԻՏԱՆՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՄԱՆՂԱԿՈՒՆՅԱՆԻ

60-ամեայ
Ստեղծագործական
Գործունէութեան
Յորելեանը

ՀԱՄԵՐԳ - ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ
ԻՐ ՀԱՆՐԱՅԱՅՏ ԵՒ ՍԻՐՈՒԱԾ ԵՐԳԵՐՈՎ

Կը ձանձրանք		
ԱՐՄԵՆ ԱՅՐՈՒՆՅԱՆ	ԱՆԱԳԻՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ	ԳՈՒԿ ԲԻՒԲՈՐԵԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԱԿԵՏՅԱՆ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԶՈՂՈՒԼՅԱՆ	ԵՈՐԵ ՊԱՊՏՈՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ԳՈՒԿԱՆԻՍՅԱՆ	ՀԱՐՈՒԹ ՓԱՐՈՒԿՅԱՆ	ՍԵՐՈՒԲԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԳՅԱՆ	ԳՈՒԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ	ՈՍԱՅԻՄԱ ՍԱՆՍՈՐՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ՍԵՆՏՐՅԱՆ	ԳՈՒԿԱՆԵՍ ՇԱՐԳՍՅԱՆ	ՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՇՈՏ ԳՈՐԻՅԱՆ	«ԶԱՄԻՆՈՅ» ՊԱՐԱՅԻՆ ՀԱՍՈՒՅԹ	ՈՒՐԵՆ ԹԵՆՈՒՆԵ
ԱԿԵՏԻՍ ԱԶԱՐՅԱՆ	Գեղարուեստական Գեղարար և Պարուսոց ՎԱՐՄԵՆ ԵՒ ՍԻՐՈՒՆ ՍՆԱՅԱՆՅԱՆ	ՊԱՊԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Համալիրային
ՆՈՒՆ ԱԿԵՏԻՍՅԱՆ

ՇԱԲԱԹ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2015
ԺԱՄԸ 7:00 ԻՆ

PAZNAZ AUDITORIUM
First Church of the Nazarene of Pasadena
3700 East Sierra Madre Boulevard, Pasadena, CA 91107

Տոմսերու համար գիմնել՝
Հ.Բ.Ը.Մ. գրասենեակ (626) 794-7942
www.ticketmicket.com (818) 265-0506
ARTN: (818) 484-5555

ԱՄՏՕ ԱՐՏՈՅԻՆ ԿՈՆԵՐԸ

«Պետք Չէ Միայն Խաղալ, Այլ Նաեւ՝ Պայքարիլ»

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

1973 թվականին էր: Լիբանանի քաղաքացիական պատերազմին առաջ: Հայրս որոշեց, որ այլևս բաւարար էր էշրեֆիի Մոնթէ Նապ-հան թաղամասի մէջ մեր բնակութիւնը: Մեր թաղը յատկանշական էր տուններուն «քով-քովի» եւ «մէջ-մէջ» իրարու միացած իրականութեամբ, ուր ընտանիքներ թէպէտ զատ տնակներու մէջ էինք, բայց միասին ապրելու սովորութիւն ունէինք: Այսպիսով, փոխադրուեցանք ժտէյտէի շրջանը, որ այդ օրերուն ծածկուած էր նարինջի պարտէզներով: Մեր շէնքը, կարելի է ըսել, որ առաջիններէն էր ընդհանուր թաղամասին մէջ: Մոնթէ Նապհանի «խճողուած» կեանքին ետք ժտէյտէի մեր տունը շատ աւելի մենակեաց էր, նորութիւն մը, որուն պէտք էր ընտելանայինք:

Բայց չուշացան նոր շէնքերու կառուցումները, եւ մեր մենակեաց կեանքը սկսաւ կամաց-կամաց փոխուիլ. այդ նոր շինարարութիւններէն մէկը Արտաւազդ Մարութեանի կառուցած շէնքն էր, մեր տան ուղիղ դիմացը:

Ես այդպիսով պիտի գիտնայի, որ Արտաւազդ Մարութեանը եւ հայրս եղած են մտերիմ բարեկամներ՝ Հալէպէն, իրենց երիտասարդական տարիներէն սկսեալ: Այդ նոր շէնքի շինարարական աշխատանքներուն հետ սկսաւ նաեւ հօրս բարեկամին հետ իմ նոր ծանօթութիւնս, որ զարգացաւ ու ջերմացաւ՝ պատանեկան կեանքիս, ընտանեկան եւ ընկերային յարաբերութիւններու մէջ աւելցնելով օղակ մը եւս՝ Ամմօ Արտոն...

Արդեօք այդ օրերը տարբեր էին, աւելի դիւրի՞ն, օրհնաբե՞ր: Ամէն կէսօր Ամմօ Արտոն մեզի պիտի միանար ճաշի: Հայրս իր աշխատանքները եւ Ամմօ Արտոն շէնքի շինարարական գործերը կարգաւորելէ ետք, իսկ ես ալ դպրոցէն վերադառնալով՝ ճաշի պահը կը վերածուէր հաւաքոյթի: Պատմութիւններ, անցեալի յուշեր, ծիծաղ, բայց մանաւանդ՝ բարեկամութիւնը ամրապնդող ժամեր, որոնք երբեք ձանձրացուցիչ չէին, քանի պատմութիւնները շատ էին: Իսկ Ամմօ Արտոն գուարթ մարդ էր եւ շատ լաւ «պատմող», իսկ պատմածներուն վրայ «համեմներ» աւելցնելու իր սովորութեամբ կը զուարճացնէր միջոցառումը:

Հայրս կը սիրէր բարեկամները եւ բարեկամութիւնը, հաւատացած էր այս մարդկային արժէքին կարեւորութեան: Ինծի հետ իր երկրային կեանքը շատ երկար չեղաւ, բայց այդ իր «խտացեալ» կեանքի ժամանակաշրջանին ան բաժնեց ինծի հետ իր բարեկամները, որոնք մէկիկ-մէկիկ իրենց դրոշմն ու արժէքները փոխանցեցին ինծի՝ որպէս կեանքիս շարունակականութեան կռուան: Եւ Ամմօ Արտոն անոնցմէ մէկն էր:

Սուրբիոյ եւ արաբական աշխարհի մէջ 1930-ական թուականներէն սկսեալ Արտաւազդը եղած էր մեծ անուն վաստակած ֆութպոլ խաղացող, այնքան մեծ, որ կոչուած էր նաեւ «ֆութպոլի թագաւոր»... Սուրբիոյ ժողովուրդը, հայ թէ արաբ, իրեն երկրպագողներն էին: Խաղցած ու մաս կազմած էր շատ մը մարզական ակումբներու, նկատի ունենալով, որ այդ օրերուն չկային ֆետերասիոնի դրութիւն եւ համակարգ, որ պարտադրանք կատարէր մարզիկներու: Ան նաեւ հասած էր Սուր-



իոյ հաւաքականի խմբապետի պատասխանատու առաջնորդութեան:

«Ժողովուրդին հերոսն էր եւ բոլորը կը սպասէին իր կոլերուն», հայրս էր: «Բայց մանաւանդ երբ իրենց խումբը «անելի» մէջ ըլլար, ամբողջ դաշտը կը թրթռար. «Ե՛ս Արտօ, պատնա կոլ» (Արտօ՛, կոլ կ'ուզենք):

Ամմօ Արտոն ինծի համար ալ սկսաւ դառնալ «հերոս», չէի տեսած իր խաղերը, ոչ ալ՝ իր նշանակած կոլերը: Բայց իւրաքանչիւր կէսօր մեր հաւաքական ճաշին հետ կ'ապրէի այդ մրցումներուն ուժը, որ կու գար այն ժամանակէն, երբ դաշտերը կը լեցուէին բացականչութիւններով. «Ե՛ս Արտօ՛, պատնա կոլ»:

Արտաւազդը կը հետեւէր իմ հետաքրքրութիւններուս: Կը տեսնէր իմ պատանեկան խանդավառութիւնս: Ապրած էր իր հազարաւոր «երկրպագուներուն» ուժը եւ գիտէր, թէ ինչպէ՛ս պէտք է այդ զգացումները կամրջել եւ հասնիլ մարդոց սրտերուն ու հոգիին: Փաստօրէն ան կրցած էր հասնիլ ու ընել ճիշդ այդպէս եւ ինծի հետ ալ կրցաւ ընել նոյնը...

Օր մը մեր հաւաքական ճաշին ընթացքին Ամմօ Արտոն ըրաւ իր անակնկալը: Իրեն հետ բերաւ իր նկարներու մեծ հաւաքածոն, որ գեղեցիկ կերպով գետեղուած էր ալպոմի մը մէջ: Զայն դրաւ առջեւս՝ որպէս ապրած ու ապրուած կեանք եւ սկսաւ ներկայացնել իր ֆութպոլային ասպարէզին աւանդը:

Հպարտութիւն չէր երբեք իր փնտռածը, ոչ ալ անցեալի այդ անվերադարձ օրերու հմայքէն բան մը վերագտնելու միտում ունէր: Ուրախ էր իր ներկայով եւ անցեալին կը նայո՞ր որպէս անուշ «յուշ», որ զինք հասուցած էր իր այսօրուան: Այդ օրը մեր տան երդիքին տակ, իր անցեալի նկարներուն մէջէն Ամմօ Արտոն փորձեց իմ պատանեկան հոգիիս մէջ դնել ամուր, ապրուած ու փորձուած արժէք մը՝ պայքարը:

«1936-ին «Եռնիտն փորթիվ Հալէպ»-ի հետ մրցեցանք Ռումանիոյ եւ Պալքանեան տարածքի ախոյեան Սէ.էֆ.էր.ի հետ,- Ամմօ Արտոն է պատմողը:- Անոնք շրջագայութեան ելած էին շրջանի երկիրները եւ յաղթանակներ տարած՝ Թուրքիոյ եւ Եգիպտոսի ախոյեաններուն դէմ: Հալէպի ժողովուրդը անձկութեամբ, բայց նաեւ մտահոգութեամբ կը սպասէր մեր առձակատուսին՝ Ռումանիոյ խումբին դէմ»:

Ամմօ Արտոն կամաց-կամաց գիտարարու էր պիտի անցեալը, որ չէի սպարած, այն ժամանակները, երբ պիտի մրցէր Ռումանացիներուն դէմ, եւ իր պատկերաւոր ոճով ան փորձեց ինծի

ներկայացնել իր հազարաւոր համակիրներուն իրմէ ունեցած անկախութիւնը՝ կոլն ու յաղթանակը: «Առաջին տասը վայրկեանին նշանակեցի կոլ մը: Եւ այդ կոլէն խելագարած, միայն տեսայ, թէ ժողովուրդը արդէն դաշտ խուժած է եւ գիտաւած է իր ուսերուն վրայ: Խաղը ընդմիջուեցաւ տասը վայրկեան: Խաղը շարունակուեցաւ, եւ մենք յաղթեցինք 3-0 արդիւնքով», պատմեց Ամմօ Արտոն:

Ան շարունակեց նկարներու էջերը դարձնել, իւրաքանչիւրին վրայ կար կեանք մը, որուն մասին պէտք էր պատմել: «Եգիպտոսի ախոյեան «ԱՏ-լի»-ին դէմ մրցումը եղաւ շատ ճակատագրական,- շարունակեց Ամմօ Արտոն:

...Մրցումը տեղի ունեցաւ Գահրէի մէջ: Առաջին տասնեօթը վայրկեաններուն մենք ստացանք չորս կոլ... Ետքը մենք նշանակեցինք մէկ կոլ, եւ իրենք դարձեալ մէկ հատ եւ կիսախաղի արդիւնքը եղաւ 5-1՝ ի նպաստ եգիպտացիներուն»:

«Զլուսահատեցանք,- առանց յուսահատելու շարունակեց պատմութիւնը:- Երկրորդ կիսախաղին



ՄՈՒԴՈՑ ԱՉԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ 1942, ՍԵՊՏ. 28-ԻՆ, ՊԷՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼԱՍՈՒԱՆԻ ԴԱՆՏԻՆ ՎՐԱՅ, ԼԻՐԱՆԱՆԻ ԱՉԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ 2-1 ԱՐԴԻՒՆԵՐՈՎ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵԼԷ ԱՌԱՋ: Զախէն՝ Արտ.Մարութեան, 6-րդ՝ Մանուէլ Գաթրոճեան(ՀԱՄԱ), 8-րդ՝ Վազգէն ՏԻՐ-Ղուկասեան (ՀԱՄԱ), Զախէն՝ Արքաիսաթ Թեշեբեան(Վասալ.), 5-րդ՝ Համազասպ Արզումանեան (ՀԱՄԱ):

չորս կոլ նշանակեցի ես անձամբ եւ մրցումը վերջացաւ 6-5՝ ի նպաստ «ԱՏ-լի»-ի, ըսաւ Ամմօ Արտոն: Եւ երեւի եգիպտացի ժողովուրդին խանդավառութիւնը սուրիացիներու խաղատէն շատ աւելի էր, քան՝ իրենց խումբէն: «Մրցումէն ետք գիտ իրենց ուսերուն վրայ տարին մինչեւ պանդոկ»:

Իւրաքանչիւր նկարի հետ Ամմօ Արտոն կը վերակենդանացնէր պատմութիւն մը, իսկ ես հարցումներ սկսայ ուղղել անոր: Այս օրքան կեանք եւ ապրուած փորձառութիւն, բայց նաեւ՝ նուաճում: Ամմօ Արտոն գոցեց լալպոմը, բայց աչքերը մնացին սեւեռած անոր վրայ: Հաւանաբար կը փորձէր վերաբաղ մը ընել... վերջալոյսէն առաջ: Վերջապէս «փառքի» օրեր էին, եւ իւրաքանչիւր մարդ պիտի ուզէր անգամ մը եւս ապրիլ այդ բոլորը: Բայց Ամմօ Արտոնին համար կար նաեւ մէկ այլ իրականութիւն մը, գոր առջեւս դրաւ իբրեւ պատուէր: Գլուխը վեր հանեց ալպոմէն եւ ինծի նայեցաւ: Պզտիկ ժպիտ մը գծուեցաւ դէմքին վրայ ու ըսաւ ինծի. «Պէտք չէ միայն խաղալ, այլ նաեւ՝ պայքարիլ»:

Շէնքի շինարարութիւնը վերջացաւ: Ամմօ Արտոն ծախեց իւրաքանչիւր յարկաբաժինը եւ մեկնեցաւ: Լիբանանի քաղաքացիական պատերազմը սկսաւ, մարդկային յարաբերութիւններն ու բարեկամական կապերը ընդհատուեցան եւ նախկինին նման չմնացին: Օրհնաբեր օրերը գացին: Երկարակեաց եւ համով-հոտով ճաշկերոյթները վե-

րացան, եւ հայրս ալ անակնկալ կերպով մեկնեցաւ այս աշխարհէն: 1977 տարուան օրերէն մէկն էր, երբ լիբանանեան քաղաքացիական կռիւներուն, այսպէս ըսած, պատերազմ-քիչ մը հանդարտութեան այդ հանգրուաններէն մէկը: Անակնկալ կերպով հանդիպեցայ Ամմօ Արտոյին, Պէյրութ քաղաքի կեդրոնական մասին մէջ, երբ տակաւին փլատակ չէր եղած: Նայեցաւ ինծի: Նշմարեցի, թէ աչքերուն մէջ կար յուզում, որուն յաջորդեց խեղդուած արցունք: Բայց «հերոսներ»-ը չեն լար, չէ՞: Գրկեց գիտ ու ըսաւ. «Հօրդ տեղն եմ, եթէ բանի մը պէտք ունենաս, քովս եկուր»:

Ատկէ ետք չտեսայ Ամմօ Արտոն: Լիբանանի պատերազմն ալ աւելի սաստկացաւ: Պէյրութ քաղաքը բաժնուեցաւ, ինչ որ ալ աւելիով դժուարացուց հաղորդակցութիւնը: Մէկ-մէկ կը լսէի, թէ քիչ մը անհանգիստ է: Մինչեւ որ լսեցի, եւ՝ այդ ալ ուշ, թէ Ամմօ Արտոն ալ մեկնած է այս աշխարհէն, 1984-ին:

Զեմ գիտեր, թէ ինչ եղաւ այդ իր նկարներու հաւաքածոյին: Իրմէ ինծի մնաց այս քանի մը նկարները,

որոնցմէ անդին շատ բան կայ: Պայքարի հասկացողութիւնն է ատիկա եւ անոր արժէքը:

Նոյնիսկ եթէ նկարները կորսուեցան կամ այլ բան եղաւ անոնց ճակատագիրը, բայց մնաց տակաւին իմ մէջս Ամմօ Արտոյին կոլերուն չիշատակը: Եւ իւրաքանչիւր կոլին հետ՝ հայուն վերապրումը...

Յեղապանութեան ենթարկուած հայը ինչքան արագ ոտքի կրցած է կենալ եւ ստեղծել ոչ թէ միայն անհատական ու հաւաքական կեանք, բայց մանաւանդ մէկական արժէք, այդ ալ տարբեր մակարդակներու վրայ: Ասիկա՝ Ամմօ Արտոն եւ իր նման շատերը, որոնք դարձան մեր հերոսները, որոնք մեր հոգիներուն մէջ դրին հայուն ապրելու հպարտութիւնը: Եւ իւրաքանչիւր «կոլ»-ը՝ քիչ մը աւելիով արմատացուց հայուն այս հպարտութիւնը:

Բայց այս հայուն հպարտութիւնը չեկաւ առանց աշխատանքի, այլ անպայման կար պայքարը:


Եւ եթէ հայը այս արժէքը եւ հպարտութիւնը պիտի շարունակէ կերտել, կը նշանակէ, թէ «պէտք չէ միայն ապրիլ՝ իմ մա խաղալ՝ այլ նաեւ պայքարիլ»:

Եւ հայուն շարունակականութիւնը նոյնինքն այս պայքարին մէջ է, որ յուսահատութիւն պէտք չէ ճանչնայ:

Ամմօ Արտոյին կոլերը: Բայց անպայմանօրէն՝ իւրաքանչիւր հայուն, իսկ իւրաքանչիւր կոլ արժէք է, բայց նաեւ՝ հպարտութիւն...

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՅԱԿՈՒԲ ԶԱՄԲԱԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԱՐՄԷՆ ԱՄԻՐԵԱՆ
Հայաստանի Հանրապետության Ռատիոյի Տնօրեն



Վերապատուելի Յակոբ Զամբազեանը մահացաւ Յուլիսի 16-ին Երեւանում: Նրա երազն էր ապրել Հայրենիքում, աշխատել հայրենիքի համար, ծառայել հայ ժողովրդին, եւ եթէ մեռնել, ապա թաղուել հայրենի հողում: Թաղուել ծլարձակելու համար, մեռնել՝ ապրեցնելու համար... Նա հայրենիքում ծառայեց քրիստոնեակալ կեցողութեամբ, նուիրուեց հայրենիքին եւ հայ ժողովրդին իր ողջ կուրծքով: Յուլիսի 25-ին Լուս Անճելիտում տեղի ունեցաւ Յակոբ Զամբազեանին նուիրուած յիշատակի հոգեւոր ծառայութիւն, հնչեցին Յակոբ Զամբազեանի երգերից, յիշատակի խօսք ասացին հարազատներն ու ընկերները: Զեզ ենք ներկայացնում յիշատակի արարողութեան ժամանակ հնչած ելույթներից մի քանիսը:

Դժուար է խօսել հարազատ մարդու մասին նրա կորստից յետոյ: Քանի որ զգացմունքներն ու յուզմունքը դառնում են խօսքից աւելի առաջնային, ուստի թոյլ տուէք ընթացքէլ այն, ինչ երէկ երեկոյեան թաց աչքերով կարողացայ գրի առնել...

Զգիտեմ ինչու է այդպէս, ընդունուած է, որ մարդու մահից յետոյ նրա մասին խօսում են անցեալ ժամանակով: Կարծում եմ դա սխալ է: Միայն է յատկապէս Յակոբ Զամբազեանի համար, քանի որ նա ոչ միայն ներկայ, այլեւ սպառնալից ժամանակն է... Նրա տեսիլքներն իրականանում են այսօր եւ դեռ իրականանալու են ապագայում... Ես պատիւ ու բախտաւորութիւն եմ ունեցել ճանաչելու Յակոբ Զամբազեանին նրա երկրային կեանքի վերջին 27 տարիների ընթացքում: Ասել ճանաչել, թեբեւս նման է ոչինչ չասելու: Մենք եղել ենք մտերիմ բարեկամ եւ գաղափարակից, ընկեր եւ հարազատ, եղբայր եւ ազգական...

Հայաստանի սարսափելի երկրաշարժից անիջապէս յետոյ, երբ Պերճ եւ Յակոբ Զամբազեանները եկան Հայաստան, մեր ճանապարհներն այդ օրուանից սկսեցին ընթանալ գոլգոթային՝ նոյն ուղղութեամբ, նոյն ճանապարհով, դէպի նոյն նպատակը: Այն ժամանակ ես աշխատում էի հեռուստատեսութիւնում: Խորհրդային երկրի դատարարութեամբ, մտածելակերպով, խորհրդային քաղաքացու ապագայի կանխորոշումով երիտասարդի համար բացառիկ իրադարձութիւն էր Զամբազեան եղբայրների հետ ծանօթութիւնը... Բազմաշերտ, խորը, մտքի բոլորովին այլ թռիչքների տէր երկու անձնաւորութիւն 180 աստիճան շրջեցին իմ կեանքի ընթացքը: Յակոբ Զամբազեանն իր կեանքն ապրեց ճիշտ Յիսուսի կեանքի օրինակով՝ ծով համբերութիւն, ներողամտութիւն, կարիքաւորներին օգնելու, ձեռք մեկնելու անհագ ցանկութիւն, Տէր Յիսուսի փառաբանութիւն՝ երգերի, երաժշտութեան, ռատիօ եւ հեռուստահաղորդումների միջոցով... եւ ամենակարեւորը միշտ բարի ժպիտը դէմքին:

Ես եւ Յակոբ Զամբազեանը սկսեցինք աւելի սերտ համագործակցութիւնը 1995 թուականից,

երբ միասին հիմնադրեցինք «Արմէն Ակոր» մշակութային կենտրոնը: Նպատակը մէկն էր՝ ծառայել մշակութիւն, օգնել կարիքաւորներին եւ մշտապէս վառ պահել Յիսուսի կանթեղը: «Արմէն Ակոր» մշակութային կենտրոնը շատ արագ, մի քանի տարիների ընթացքում վերածեց մի հսկայական մշակութային, բարեգործական կենտրոնի: Իւրաքանչիւր ամիս շուրջ 5000 կարիքաւոր ընտանիքների ծնողազուրկ երեխաներ ստանում էին օգնութիւն: Ստեղծուեց «Արմէն Ակոր» մշակութային կենտրոնի սիմֆոնիկ նուագախումբն ու երգչախումբը, ձայնագրման ստուդիան: Յակոբ Զամբազեանի ստեղծագործութիւնները ձայնագրուեցին եւ ռադիոհեռուստատեսային հաղորդումների միջոցով ներկայացուեցին հին հանրութեանը:

Յակոբ Զամբազեանը երկար տարիներ (շուրջ 35 տարի) գլխավորել է հոգեւոր հաղորդումների պատրաստմամբ եւ հեռարձակմամբ: Դեռեւս խորհրդային տարիներին Ռատիօ Մոնտէ Կառլոյի արիւնքերով կարելի էր լսել Յակոբ Զամբազեանի հոգեւոր հաղորդումները: Հայաստանն այլեւս անկախ էր, եւ ինչո՞ւ Մոնտէ Կառլոյից հաղորդել, եթէ կարելի էր Հայաստանում եւ արտազրեւ, եւ հեռարձակել: Այս եւ այլ հեռանկարներով 1995 թուականի վերջին հիմնադրեցինք «Արմէն Ակոր» ընկերութիւնը, որն իրենից ներկայացնում է այսօր արդէն Հայաստանի ամենախոշոր FM ցանցը եւ միջազգային հեռարձակման 1000 kWt հզօրութեան միջին եւ կարճ արիւնքերի ռատիոկայաններ...

Այդ օրուանից սկսած, ամէն առաւօտ Հայաստանի ռատիոլստողները հնարաւորութիւն ունեն ունկնդրելու Յակոբոս Երուսաղէմցու (այդպէս է նրա երաժշտական մականունը) Աւետիս հոգեւոր հաղորդումը... Գաղափարն այնքան ոգեւորեց մեզ, որ որոշեցինք Հայաստանի վրայով հեռարձակել նաեւ հոգեւոր հաղորդումներ դէպի Մերձաւոր Արեւելքի, Կենտրոնական Ասիայի եւ տարածաշրջանի այլ երկրներ: Այսօր արդէն օրական մօտ 8 ժամ հեռարձակում ենք հոգեւոր հաղորդումներ՝ արաբերէն, թուրքերէն, եբրայերէն, ռուսերէն, դազախերէն եւ այլ լեզուներով: Փաստօրէն կարելի է արձանագրել, որ Յակոբ Զամբազեանը Հայաստանում վառելով Յիսուսի կանթեղը՝ Աստուծոյ ճշմարիտ խօսքը տասնեակ լեզուներով տարածելու գործի նախաձեռնողն

ու իրականացնողը եղաւ: Այո՛, վստահաբար կարելի է ասել, որ նա ռատիոհաղորդումների միջոցով Աւետարանը տարածելու գործում իր հսկայական եւ անգնահատելի աւանդը ունեցաւ:

Եւ որ ամենակարեւորն է, այս ամէնն արեց իրեն յատուկ բարի ժպիտը դէմքին...

Երբ մենք կառուցում էինք միջին արիւնքի մեր նոր անտենան, որը մեզ հնարաւորութիւն էր տալու տասներկու տարբեր ուղղութիւններով մինչեւ 2500 կմ ռադիոազդանշաններ ուղարկել, նա, թողած Գերմանիայի իր տաքուկ եւ յարմարաւէտ կեանքը, ցրտին, սառնամանիքին, կէս մեթրից աւելի ձեան մէջ մեզ հետ մասնակցում էր անտենայի շինարարութեանը...

Եւ որ ամենակարեւորն է, այս ամէնը անում էր իրեն յատուկ ժպիտը երեսին:

Յաջող կարեւոր նախաձեռնութիւնը հեռուստաընկերութեան ստեղծումն էր: Տարիների ընթացքում մենք ստեղծել էինք հզօր մշակութային հիմք, հեղինակութիւն, եւ մեր շուրջն էր հաւաքուել ճշմարիտ արուեստագէտների մի հզօր բանակ:

Հեռուստատեսութեան ստեղծումն այլեւս անխուսափելի էր...

2000 թուականի Յուլիսի 1-ին ազդարարուեց «Արմէն Ակոր» հեռուստաընկերութեան կանոնաւոր եթերի սկիզբը: Մեր նպատակն էր ստեղծել մշակութային հեռուստաալիք՝ ընտանիքի բոլոր անդամների համար: Շատ կարճ ժամանակում «Արմէն Ակոր» հեռուստաընկերութիւնը համարեց առաջատարների շարքը: Յիսուսից աւելի մշակութային, հոգեւոր, մանկական, երիտասարդական, երաժշտական հաղորդումներ ու ծրագրեր, իտալեր ու մրցոյթներ, փաստաւարերաբանական ակնարկաշարեր ու ֆիլմեր...

Եկաւ մի ժամանակ, երբ մեր ընդհանուր կառույցներում՝ նուագախումբ, երգչախումբ, ռատիօ, հեռուստատեսութիւն, մշակութային կեդրոն եւ այլն, ընդհանուր

առմամբ հազարից աւելի մարդ էր աշխատում:

Գիտէ՞ք, որ Հայաստանում կեանքը եղել եւ շարունակում է մնալ բարդ եւ դժուարութիւններով լի... եւ նոյնիսկ աշխատանք ունեցող մարդը միեւնոյնն է ունի հարիւրաւոր կենցաղային խնդիրներ եւ մարդկային բարդ փոխյարաբերութիւններ:

Յակոբ Զամբազեանն առանց տրտնջալու իր ուսերին էր կրում այդ մարդկանց պրոբլեմներն ու խնդիրները, սիրով ու պատրաստակամութեամբ ձեռք մեկնում՝ օգնելու... նոյնիսկ եթէ չդիմէին, Յակոբն իմանալուն պէս հեքիաթների բարի հրաշագործի նման կը յայտնուէր եւ կ'օգնէր...

Եւ որ ամենակարեւորն է, նա այդ ամէնը անում էր իրեն յատուկ բարի ժպիտը երեսին...

Հիմա մենք բոլորս էլ շատ ենք կարօտելու նրան, որովհետեւ Յակոբ Զամբազեան մարդու տեսակը մեր իրականութեան մէջ չկայ... որովհետեւ նա շատ մեծ եւ կարեւոր տեղ էր զբաղեցնում իրեն ճանաչողների կեանքում: Ո՞վ պէտք է լրացնի այդ դատարկութիւնը... նա իր կեանքի օրինակով շատ բան սովորեցրեց մեզ: Նա սիրում էր միշտ կրկնել՝ «բարձրացրու, որ բարձրանաս ...» այդպէս էլ արեց՝ բարձրացրեց բոլորին ում հանդիպեց իր երկրային կեանքի ընթացքում: Ես չզիտեմ, թէ երկնքից նա շողեր արձակելու է մեր կեանքի ճանապարհը լուսաւորելու համար... բայց մի բանում հաստատ համոզուած եմ, որ Յակոբ Զամբազեանին ճանաչողների համար նրա ապրած կեանքն ինքնին լոյս է եւ առաջնորդութիւն, պայծառ ու անսպառ ճառագայթներ: Ուրեմն եկէ՛ք քայլենք այդ բերեղեղեայ մարտու ճանապարհով, Յակոբի օրինակով այնպէս ապրենք մեր կեանքը, որ ինքներս դառնանք լոյս ճառագող օրինակ... Եւ որ ամենակարեւորն է, անենք այդ ամէնը Յակոբ Զամբազեանին յատուկ բարի ժպիտը դէմքին...

ՆորՅոր **Շտրհանդէս-Գինեձօն**

ՐԱՍԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆԻ՝

"TURKISH INTELLECTUALS WHO HAVE RECOGNIZED THE REALITY OF THE ARMENIAN GENOCIDE"

Անգլերէնով համադրուած վաւերագրական հատորին Կազմակերպութեամբ՝

Ռ.Ա.Կ.-Ի «ՆՈՐ ՕՐ» ՊՆՏՏՈՆԱԹԵՐԹԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ

ԻՐԱՐԱՏՅԵՐՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ

Տեղի պիտի ունենայ Կիրակի, Օգոստոս 30, 2015, երեկոյեան ժամը 6:00-ին, Փաստօրէնայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու ԿԻՐԱԿՈՍ սրահին մէջ 2215 East Colorado Boulevard, Pasadena

Հանդիսավար՝ **ԽԱԶԻԿ ԺԱՆՈՅԵԱՆ**
Գլխաւոր բանախօս՝ **ՓՐՈՖ. ՕՇԻՆ ԲԷՇԻՇԵԱՆ**

Սրտի խօսքեր՝


«ՆՈՐ ՕՐ»-Ի Ե ԻՐԱՐԱՏՅԵՐՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Պիտի գործադրուի երգի, պարի, ասմունքի ելոյցներով ճոխացած յայտագիր մը՝ ներկաները պիտի սեղաններու շուրջ բոլորուած պիտի հիւրասիրուին գինիով և համեղ պատուիկներով

Մուտքը՝ ազատ

Սիրով կը հրատարակուի հայ ընթերցասէր հասարակութիւնը

ԲՈՒՆԴԵՍԼԻԳԱ. ՀԵՆՐԻԽ ՄԻՒԹԱՐԵԱՆԻ ԵՐԿՈՒ ԿՈՒՆԵՐ



Դորտմունդի «Բորուսիան» ֆուտբոլի Գերմանիայի առաջնութիւնում մեկնարկեց տպաւորիչ խաղով ու վստահ յաղթանակով, իսկ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միւթարեանը՝ երկու կոլերով:

Բունդեսլիգայի առաջին տուրում Թոմաս Տուխելը թիմն ընդունեց Միոնխենգլադբախի «Բորուսիային», որի դարպասն ուղարկեց 4 անպատասխան գոլ: Դորտմունդցիները մեկնարկային կազմում էր Հենրիխ Միւթարեանը, ով 8-րդ րոպեին դարձաւ գոլի հեղինակ, սակայն մրցավարները կասկածելի խաղից դուրս վիճակ արձանագրեցին նրա մօտ: Սկզբնամասում տանտերերն ունէին նկատելի առաւելութիւն եւ խփեցին 2 գոլ: 15-րդ րոպէին հաշիւը բացեց գերմանացի կիսապաշտպան Մարկո Ռոյսը, իսկ 6 րոպէ անց զաբոնցի յարձակուող Պլեյր-Էմերիկ Օբամեյանգը կրկնապատկեց հաշիւը: 33-րդ րոպեին գոլ խփեց նաեւ Հենրիխ Միւթարեանը, ով Օբամեյանգի փոխանցումից յետոյ գրաւեց դատարկ դարպասը:

Հայ կիսապաշտպանն ակտիւ էր նաեւ երկրորդ խաղակէստում, իսկ 50-րդ րոպէին դարձաւ դուբլի հեղինակ: Միւթարեանը հանդէս եկաւ առանց փոխարինման ու անցկացրեց լաւ հանդիպում, իսկ նրա երկրորդ գոլը վերջինն էր խաղում: Ընթացիկ մրցաշրջանում Հենրիխն իր գոլերի քանակը հասցրեց 6-ի:

Գերմանացի մասնագէտ Թոմաս Տուխելը «Բորուսիայի» գլխաւոր մարզիչի պաշտօնում յաղթանակով մեկնարկեց Բունդեսլիգայում:

ԵՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ ԱՐԱՄ ԱՒԱԳԵԱՆԸ ԲՐՈՆՁԷ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Բուլղարիայի Սամոկով քաղաքում աւարտուած բռնցքամարտի Եւրոպայի առաջնութիւնում Հայաստանի հաւաքականը բաւարարուեց մէկ բրոնզէ մեդալով: 56 կգ քաշային Արամ Աւագեանը բարձրացաւ պատուոյ հարթակ:

Հայաստանի թիմը նուաճեց նաեւ Հոկտեմբերին Քաթարի մայրաքաղաք Դոհայում կայանալիք աշխարհի առաջնութեան երկու ուղեգիր: Արամ Աւագեանն ու 52 կգ քաշային Կորիւն Սողոմոնեանն ապահովեցին ուղեգրերը:



ԱՐԵՄՏԱՅԱՅԵՐԷՆԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՅԱՅԵՐԷՆԻ

Շարունակուած էջ 6-էն

Փարիզի «Մկնիկ» աշխատանցի տնօրէն Արմինէ Գրիգորեան («Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի միատեղ եւ զուգահեռ շփումն ու զարգացումը») եւ Լիբանանի Չմմաու Երանելի Իգնատիոս Մալոյեան դպրեւանքի եւ Ս. Միքայէլ ընծայարանի ուսուցչուհի Սօսէ Փիլաճեան («Միթէ վերջին պօչտն եմ ես»): «Մայրենին անաղարտ պահել»:

ԵՊՀ հայոց լեզուի ամպիոնի ասփիրանդ Մայրանուշ Շահումեան անդրադարձաւ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մերձեցման ու միաւորման վերաբերեալ տարբեր լեզուաբաններու մօտեցումներուն, բանավէճերուն ու կարծիքներուն՝ մասնաւորապէս ինդիերի վերաբերեալ Հր. Աճառեանի աշխատութիւններուն մէջ տեղ գտած ուսումնասիրութիւններուն ու արծարծումներուն:

Զեկուցումներու շարքը եզրափակուեցաւ ԳԱԱ-ի լեզուի հիմնարկի

գիտաշխատող Անահիտ Քարտաշեանի «Իրտարկումներ արդի արեւմտահայ իրականութեան մէջ գործառուող անձնատուները վերաբերեալ» հետազոտութեան ներկայացմամբ:

Տեղի ունեցաւ օգտաշատ քննարկում:

Համաժողովի աշխատանքներուն վերաբերեալ ամփոփիչ խօսքով հանդէս եկան եւ իրենց տպաւորութիւնները, դիտողութիւններն ու առաջարկները ներկայացուցին Սուրէն Դանիէլեան, Հիլտա Փանտեան-Գալֆայեան, Նշան Որբերեան, Յակոբ Պալեան, Ժիրայր Զոլաքեան, Մանուէլ Աղամեան եւ այլն:

Մասնակիցներուն հարցումներուն պատասխանեցին սփիւռքի նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնեան եւ Հր. Աճառեանի անուան լեզուի հիմնարկի տնօրէն Վիկտոր Կատուալեան:

Ամփոփիչ խօսքով հանդէս եկաւ Հայաստանի սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեան, որ ողջունելի նկատեց համաժողովին ընթացքին արտայայտուած միտ-

«ԱՐԱՐԱՏԸ» ԲԱՅ ԹՈՂԵՑ ՅԱՂԹԱՆԱԿԸ «ՓԻՆԻԿԻ» ԴԵՄ ԽԱՂՈՒՄ

Ֆուտպոլի Հայաստանի առաջնութեան երրորդ տուրի վերջին խաղում հանդիպեցին «Արարատը» եւ գործող ախոյեան «Փինիկը»:

Աւանի ֆուտպոլային ակադեմիայում գրանցուեց 1:1 հաշիւը: Մինչեւ 80-րդ րոպէն «Արարատը» սերբ յարձակուող Ալեքսանդր Ռակիչի գոլի շնորհիւ առջեւում էր հաշուի մէջ, սակայն փոխարինման դուրս եկած Ղուկաս Պողոսեանը վերջնամասում «Փինիկին» փրկեց պարտութիւնից:

«Արարատը» բաց թողեց առաջին գոլը եւ, վաստակելով 7 միաւոր, մնաց երկրորդ տեղում: Առաջատար Գիւմրիի «Շիրակն» ունի 9 միաւոր, իսկ «Փինիկը»՝ 4:

Հայաստանի առաջնութիւն, երրորդ տուր

«Արարատ» - «Փլունիկ»՝ 1:1

«Բանանց» - «Ալաշկերտ»՝ 2:2

ԳԵՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆԸ ԴԱՐՁԱՒ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ ԽԱՂԱՅԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ

Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Գէորգ Ղազարեանը դարձաւ Պորտուգալիայի առաջնութիւնում խաղացած առաջին հայ ֆուտբոլիստը: Պորտուգալիայի առաջնութեան մեկնարկային տուրում «Մարիտիմուն» մրցակցի խաղադաշտում 1:2 հաշուով պարտուեց «Ունիան Մադեյրային»:



Յիշեցնենք, որ հայ կիսապաշտպանն այս մրցաշրջանից առաջ յունական «Կերկիրայից» է տեղափոխուել պորտուգալական ակումբ, որի հետ կնքել է 3 տարուայ պայմանագիր:

«ՉԵԼՍԻՆ» ԽՈՇՈՐ ՀԱՇՈՒՈՎ ՊԱՐՏՈՒԵՑ ՄԱՆՉԵՍԹԵՐՈՒՄ

Անգլիական Բարձրագոյն լիգայի երկրորդ տուրի կենտրոնական խաղը կայացաւ Մանչեսթերում, որտեղ փոխախոյեան «Մանչեսթեր Սիթին» ընդունեց ախոյեան «Չելսիին»:

Ժողէ Մոուրինյոյի թիմն անակնկալ պարտութիւն կրեց 0:3 հաշուով: Առաջին խաղակէստում մանչեսթերցիներն աւելի վտանգաւոր էին գրոհում եւ ընդմիջման գնացին հաշուի մէջ առջեւում: Տանտերերի առաջին գոլը 31-րդ րոպեին խփեց արգենտինացի յարձակուող Սերխիօ Ագուերոն, ով աչքի ընկաւ գեղեցիկ գրոհի արդիւնքում:

Երկրորդ խաղակէստում 2 թիմերն էլ ունեցան գոլային պահեր, բայց վերջնամասում «Մանչեսթեր Սիթին» խփեց 2 գոլ՝ տանելով վստահ յաղթանակ: 79-րդ րոպէին բելգիացի պաշտպան Վենսան Կոմպանին անկիւնային հարուածի խաղարկման արդիւնքում կրկնապատկեց հաշիւը, իսկ 6 րոպէ անց բրազիլացի կիսապաշտպան Ֆերնանդինյոն վերջակէտ դրեց խաղին:

Մանչեսթերցիները տարան երկրորդ յաղթանակը, իսկ լոնդոնցիները դեռ չեն յաղթել այս առաջնութիւնում եւ ունեն մէկ միաւոր:

ՄԱՐԻԱ ՇԱՐԱՊՈՎԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԵԿԱՄՈՒՏ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՁՈՒՅԻ

Ռուսաստանցի թենիսիստուհի Մարիա Շարապովան աշխարհի ամենամեծ եկամուտն ունեցող մարզուհին է: Նա 11-րդ անգամ է գլխաւորում է Forbes-ի ցուցակը: Մրցանակային պարգեւատրումներից, գովազդային վճարումներից եւ անձնական բիզնեսնախաձեռնութիւններին Շարապովան մէկ տարում ստացել է 29,7 միլիոն տոլար եկամուտ:

Նա գործող պայմանագրեր ունի Nike, Head, Avon, Porsche, Tag Heuer, Evian բրենդների հետ եւ զբաղւում է կոնֆենտերի արտադրութեամբ՝ SugarPova.


Երկրորդ տեղում աշխարհի առաջին ռակետ, ամերիկացի Սերենա Ուիլյամսն է: Երրորդը դանիացի թենիսիստուհի Կարոլին Վոզնյացկին է:

1. Մարիա Շարապովա (Ռուսաստան, թենիս)՝ 29,7 միլիոն տոլար
2. Սերենա Ուիլյամս (ԱՄՆ, թենիս)՝ 24,6 միլիոն
3. Կարոլին Վոզնյացկի (Դանիա, թենիս)՝ 14,6 միլիոն
4. Դանիկա Պատրիկ (ԱՄՆ, NASCAR)՝ 13,9 միլիոն
5. Անա Իվանովիչ (Սերբիա, թենիս)՝ 8,3 միլիոն
6. Պետրա Կվիտովա (Չեխիա, թենիս)՝ 7,7 միլիոն
7. Սիմոնա Հալեպ (Ռումինիա, թենիս)՝ 6,8 միլիոն
8. Ռոնդա Ռուզուի (ԱՄՆ, UFC)՝ 6,5 միլիոն
9. Ստեյսի Լյուիս (ԱՄՆ, գոլֆ)՝ 6,4 միլիոն
10. Ազնեշկա Ռադչանսկա (Լեհաստան, թենիս)՝ 6 միլիոն

քերը, ներկայացուած առաջարկները: Ան նշեց, որ ասիկա սկիզբ էր, թերեւս առաջին գործնական քայլն էր հայոց լեզուի երկու ճիւղերու մերձեցման ուղղութեամբ: Խնդիրը լուծման յաջորդ քայլը պիտի ըլլայ ստեղծումը երեք տարբեր յանձնախումբերու, որոնք՝

օգտագործելով տեղեկատուական արդի կարելիութիւնները, պիտի աշխատին տարբեր եղանակներով, նիստեր պիտի գումարեն, պիտի կազմակերպեն քննարկումներ, պիտի հրապարակեն յօդուածներ եւ պիտի ներկայացնեն յստակ առաջարկներ ու խնդիրները:

ՄԱՐԱԶԴ



ԱՐՄԻՆԷ ՓՕՇՈՂԵԱՆ-ՀԱՃԻՆԵԱՆ
1941-2015

Խոր ցաւով կը գուժենք մեր կնոջ, մօր, քրոջ եւ հարազատին՝ ԱՐՄԻՆԷ ՓՕՂՈՂԵԱՆ-ՀԱՃԻՆԵԱՆի մահը որ պատահեցաւ Կիրակի, Օգոստոս 16, 2015ին յետ երկարատեւ հիւանդութեան: Թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Օգոստոս 20, 2015, կէսօրէ ետք ժամը 1:00ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd, Pasadena CA 91106, ապա թաղումը՝ Liveoak Cemetery գերեզմանատան մէջ, 200 East Duarte Road, Monrovia, CA 91016:

- Սգակիրներն են՝ Ամուսինը՝ Հայկ Հաճինեան
- Զաւակները՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տեփոյեան եւ զաւակները՝ Վահագն եւ Ռաֆֆի
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Ալիա Հաճինեան եւ զաւակը (Լիբանան) Այրի Տիկ. Հիլտա Հաճինեան եւ զաւակները՝ Միշէլ, Տանիէլ եւ Հայկ
- Եղբայրները՝ Տէր եւ Տիկ. Մկո եւ Էլէն Փօշողլեան (Գանատա)
- Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Վիքի Փօշողլեան եւ զաւակները (Լիբանան)
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարօ Փօշողլեան եւ զաւակները (Լիբանան)
- Քոյրերը՝ Օր. Անի Փօշողլեան (Իտալիա)
- Տէր եւ Տիկ. Միշէլ եւ Սիլվա Ապսի եւ զաւակները (Լիբանան) եւ համայն Հաճինեան, Տեփոյեան, Փօշողլեան, Էլ Խուրի, Եսփուճեան, Թօփալեան, Բրուտեան եւ Քէշիշեան ընտանիքներ:

Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել «Մասիս» շաբաթաթերթին:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



Հանգուցեալ ԽՈՐԷՆ ՂԱԶԱՐԵԱՆի մահուան քառասունքին առիթով (մահացած Լիբանան) հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Օգոստոս 30, 2015ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ 500 Central Avenue, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝ Այրին՝ Սոնիկ Ղազարեան եւ զաւակները Գարոլին, Դալար եւ Նաթալի (Լիբանան)
- Եղբայրը՝ Ոսկեբերան եւ Կարինէ Ղազարեան եւ զաւակը Գրիգոր Մասիս եւ Անի Պօղոսեան
- Ճորճ եւ Երան Փայասեան եւ զաւակները
- Եւ համայն հարազատները եւ բարեկամները:
- Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Phoenicia ճաշարանին մէջ, 343 North Central Avenue, Glendale:
- Հանգուցեալին յիշատկը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:


ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



Հանգուցեալ ՊՕՂՈՍ ՂԱԶԱՐԵԱՆի մահուան քառասունքին առիթով (մահացած Լիբանան) հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Օգոստոս 30, 2015ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ 500 Central Avenue, յաւարտ Ս. Պատարագի:

- Սգակիրներ՝ Լուսին Ղազարեան եւ զաւակները Գրիգոր, Սերժ եւ Նայիրի (Լիբանան)
- Եղբայրը Ոսկեբերան եւ Կարինէ Ղազարեան եւ զաւակը Գրիգոր Մասիս եւ Անի Պօղոսեան
- Եւ համայն հարազատները եւ բարեկամները:
- Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Phoenicia ճաշարանին մէջ, 343 North Central Avenue, Glendale:
- Հանգուցեալին յիշատկը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՍԱՄՈՒԷԼ ՍԻՆԱՆԵԱՆի մահուան առաջին տարեիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի 23 Օգոստոս, 2015, կէսօրէ առաջ ժամը 11:30ին, հանգուցեալի շիրիմին մօտ, Ֆորեսք Լոն, Հոլիվուտ Հիլզ գերեզմանատան մէջ:

Այնուհետեւ հոգեճաշ պիտի մատուցուի Կլենտէյլի Dream Palace սրահին մէջ: Հասցէ՝ 810 E. Broadway: Հանգուցեալին յիշատկը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՐՄԻՆԷ ՀԱՃԸՆԵԱՆ-ի մահուան տխուր առիթով Ս.Գ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը եւ յարակից կառույցները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ Վարիչ Մարմնի անդամ Տէր եւ Տիկ. Կարինէ եւ Վարդան Տեփոյեանին:

ԶՐՈՅՑ ԼԻԼԻԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ ՅԵՏ

Շարունակուած էջ 13-էն

պարակէ «Ժամանակակից Եւրասիա» արեւելագիտական պարբերականը, իմբազրապետութեամբ թրքագէտ Ռուբէն Սաֆրաստեանի. իմբազրական կազմի անդամ է Լ. Յարութիւնեան: 1 (2) 2012-ի համարին մէջ ան ստորագրած է «Լիբանանը Քաղաքական ճգնաժամերի Եւ Յարաբերական Կայունութեան Միջեւ (2008-2011)» յօդուածը, անոր կցելով 2008-2011 թուականներու հիմնական իրադարձութիւններու ժամանակագրութիւնը (էջ 9-60): Հոն կը պարզուի, որ ան քայլ առ քայլ կ'արձանագրէ լիբանանեան իրադարձութիւնները եւ իրազեկ պահելով գիտական-քաղաքական շրջանակները:

Ուսած, այլ՝ դասախօս է Երեւանի Պետական Համալսարանի արեւելագիտութեան ֆաքուլթեթին մէջ, թեմա ունենալով՝ արաբական աշխարհի ժամանակակից քաղաքական կուսակցութիւնները: Փաստօրէն, ան կը պատրաստէ հայրենի պետական-դիւանագիտական վաղուան քատրերը, որոնք պիտի ծառայեն արաբական երկիրներու մէջ որպէս Հայաստանի Հանրապետութեան դիւանագէտներ:

Ան այս օրերուն կը գտնուի Զուլիցերիոյ Ֆրիպուրկ քաղաքը, որուն համալսարանի գրադարանին մէջ կը պրպտէ ու կը պեղէ նոր տուեալներ ու տեղեկութիւններ իր մասնագիտութեան առնչութեամբ, որպէսզի շուտով պաշտպանէ դոկտորական աւարտաճառը:

Բեղուն երթ կը մաղթենք ժրջան, ջանասէր եւ հետեւողական արեւելագէտ Լիլիթ Յարութիւնեանին:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

ԴՈՒ, ԲԱՐՈՎ ԵԿԱՐ

Շաբաթնակուած էջ 14-էն

նում տիեզերքի թեմային, բայց տիեզերքն ինձ կախարհել էր դեռ ուսանողական տարիներին:

Ֆիզիկայի մասնագետ դառնալու համար պարտադիր էր մէկ տարի հետեւել աստղագիտութեան դասընթացներին, որն աւարտում էր երկու շաբաթ տեւող պրակտիկայով եւ քննութեամբ Բիւրականի աստղագիտարանում «ուր, այդ տարիներին տնօրէն էր մեր ազգակիցը՝ աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումեանը: Նա իր նոր տեսութիւններն էր ներկայացրել աշխարհին՝ «Երիտասարդ եւ նոր ծնունդ աստղերի մասին»: Բոլորի աչքերն ուղղուած էին Բիւրականին: Գիտակից էինք, որ մեծ առանձնաշնորհ է մեզ համար աշակերտել այսպիսի գիտնականի: Սով. Միութիւնը տեսնելով մտքի այդ տիտանի կարողութիւնները՝ ոչինչ չէր ինայտում աստղագիտարանը տեխնիկայի ամենավերջին սարքաւորումներով կահաւորելու համար:

Երբ աստղերն սկսում էին փայլել երկնակամարում անհամբեր հրճուանքով գնում էինք աստղագիտարան եւ պաշտամունքի շտապող հաւատացեալի երկիւղածութեամբ, աշխարհի հզօրագոյն տեղեկագրերով գննելու երկինքը. եւ այդ դասերը տեւում էին մինչեւ լուսաբաց, քանի որ տարբեր աստղեր տեսադաշտում երեւում էին տարբեր ժամերի: Ահա թէ որտեղից է գալիս ինձ մօտ տիեզերքի այդ կախարհանքը, քանզի այն կառավարող օրէնքների կատարելութիւնն ու ճշգրտութիւնը միայն զարմանք ու հիացմունք էր յարուցել իմ հոգում:

Մի քիչ շեղուցի, բայց ոչինչ. նման գործերս կարգալիս, գոնէ հիմա հասկանալի կը լինի, թէ որտեղից է գալիս երկինքների հետ գրուցելու փափագս:

Պր. Քէշիշեանը գրածս հաւանել էր, տպեց: Բայց ինձ համար կարեւորն ու քաջալերողը իր հաստատումն էր, որ ինձ ճանաչել էր իմ գրելատճից: Ուրեմն արդէն ունէի իմ գրելակերպը: Իսկ դա իւրաքանչիւր գրողի համար մեծ գնահատական է եւ խթանիչ ուժ:

Մէկ ուրիշ առիթով Կլենտէյլի գրադարանում ես ու ինքը բարձրանում էինք վերելակով, Նա ասաց.

«Ես քո արձակը շատ եմ հաւանում ու չեմ կարող մոռանալ «Յաւերթի ձամբորդները» գիրքը: Այն մեծապէս տպաւորել է ինձ: Մի օր ուզում եմ մեր գրողների գործերի հատընտիրը պատրաստել: Արձակդ անպայման մէջը պիտի ներկայացնեմ: Մնայուն գործ է:

Աւելորդ է ասել թէ ինչքա՞ն հաճելի է գիտակ մարդու կողմից գնահատանք լսելը:

Կեանքում կան պատահարներ, որ անկարելի է մոռանալ... Մօտ մէկ տարի առաջ էր: Կլենտէյլի հանդիսարանում նստած՝ սպասում էի ձեռնարկի սկսելուն «Ժամանակը կարճելով ընթերցանութեամբ: Շարքի ծայրի աթոռին էի նստած: Ձգացի որ մէկը առջեւս կանգնեց, ձեռնափայտը խփեց չատակին եւ ասաց. «Բարեւ ձեզ»: Գլուխս վեր բարձրացրի. մի միջազանց, մագաթափ ծերուկ, անուշիկ, գրեթէ մանկական ժպիտով ինձ էր նայում եւ սպասում: Ես ականաչից բարեւը վերցրի՝ մեկնում ձեռքը թոթուելով, բայց դեռ չգիտէի, թէ նա ո՞վ է. ճիգ էի

թափում լիշէլու, բայց ապարդիւն: Անյարմար վիճակի մատնուած մտածում էի. Այս պատկառելի ծերուկը (ների՞ր) ինչո՞ւ է դեռ փայլող աչքերը յառած դէմքիս՝ շարունակում ժպտալ: Վերջապէս, տեսնելով շփոթմունքս, հարցրեց. «Չճանչցա՞ք»: Անյարմար վիճակից դուրս գալու համար եւ մեղաւորութեան ծանր զգացումով խեղճացած՝ ասացի. «Կը ներէ՞ք որ չեմ ճանաչում, խնդրեմ օգնեցէ՛ք ինձ լիշէլու, թէ ո՞վ էք»:

«Օշինն եմ, պատասխանեց նա: Ամօթից վեր թռայ, ընկալ վզովը՝ ներողութիւն խնդրելու գինք ճանաչելուս համար (թէ եւ լսել էի, որ առողջական վիճակը ծանր է, բայց այսքան չէի պատկերացնում): Այնքան անիրական էր թւում կատարուածը, որ ցնցուած էի: Ջարմացած էի, բայց եւ ուրախ, որ ոտքի վրայ է:

Վերջին անգամ պրոֆեսորին հանդիպեցի երեք ամիս առաջ

UCLA -ի կազմակերպուած եւ հայոց ցեղասպանութեան տարեկիցին նուիրուած "Requiem"-ի համերգի ընդմիջմանը: Տաք-տաք խօսում էր մէկի հետ: Երբ ինձ տեսաւ, առանց ընդհատելու զրոյցը, քայլ առաւ եւ ձեռքը մեկնեց բարեւի: Մանրուք է... Բայց ինձ համար այն ամբողջացրեց այդ գեղեցիկ օրուայ հմայքը:

Եւ հիմա, իմ գիտցածս նախկին Օշինը, նախկին կերպարանքով եւ մագերի նախկին սանրուածքով, եկել է եւ ասում է, որ ինձ համար եկաւ:

Դու բարով եկար եղբայր սիրելի, գալո՛ւ՝ մի՛շտ բարի: Անկախ նրանից ինչպէ՞ս կ'որակես գիրքս, քո խօսքը գլխիս վրայ:

Պրոֆ. Օշին Քէշիշեանը իր ելույթն աւարտեց ասելով. «Անցեալ տարի ես մահամերձ էի: Երեսուն երկու օր մահաքունի (լեթարգիական քուն, քոմա) մէջ մնացի: Վերջն արթնացայ. բարեբախտաբար ողջ եմ: Բժիշկս ասաց. «Դու կ'ապրես, եթէ կատարես հետեւեալ

երեք խորհուրդներս.

1. Դեղերդ կանոնաւորապէս ամէն օր պիտի առնես:

2. Ամէն օր պիտի աղօթես: Դէմքին նայեցի ստուգելու համար, թէ արդեօք կատակո՞ւմ է: Ո՛չ, միանգամայն լուրջ էր:

3. Երրորդը չեմ լիշում, քանի որ ուղեղս զբաղուած էր նրա առողջական վիճակի լրջութեամբ:

Սիրելի պրոֆեսոր Օշին Քէշիշեան, երկրորդ ծնունդդ վայելիք եւ ի խորոց սրտի շնորհակալութիւնս ընդունիր: Շէն մնայ, ուրախ մնայ: Նաեւ ամէն օր աղօթելը մի՛ մոռնայ: Մենք քեզ դեռ շատ պէտք ունենք: Պինդ կաց: Ես քեզ մաղթում եմ ամենալաւն ու բարին:

Տէրը լաւերին դիւրին-դիւրին չի տանում, քանզի գիտի, որ բարիներն են աշխարհը իրենց ուսերին կրում:

Ջերմ ողջոյններով. Խոնարհաբար աւագ քոյրդ՝

ՍՈՆԻԱ ՄԿՐԵԱՆ

Գրաւում Թուական

Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

Սեպտեմբեր 20, 2015

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30			



Armenian Independence Day FESTIVAL

To reserve your booth
please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէ՛ք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938